Ժ. ՏԱՐԻ 2867 · ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 14 ՆԱԽԱՍԱՐԴ 4386 · 24 ՕԳՈՍՏՈՍ 1893 · 23 ՍԷՖԷՐ 1311 · ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.
ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան [illegible]	150
» [illegible] »	75
» [illegible] »	40
Օտար երկիրներ [illegible]	56
» [illegible] »	28
Ընթեր թուղթի [illegible] · Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթ[illegible] միօրինակ Ղրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏ. 24/6 ՍԵՊՏ. 1893

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ԱՄԵՆ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազանի Կ. Պոլիս այցելութիւնը, զոր ծանուցինք Արեւելքի երեկի թուով, կրկնապէս ուշագրաւ իրողութիւն մ'է. զի մեր Եկեղեցւոյ պատմութեան մէջ Երուսաղէմի Պատրիարքաց Կ. Պոլիս այցելութիւնք կարեւոր իրողութիւն մը համարուած են միշտ, և զի արդի Պատրիարքն Երուսաղէմի, իւր խոհականութեամբ, ուղղամտութեամբ, երկարամեայ ծառայութեամբ և երբեմն Կ. Պոլսոյ մէջ եւս Պատրիարքական պաշտօն վարած ըլլալովն, հայ Եկեղեցւոյ հօտին համարման արժանացած եկեղեցական մ'է։

Նորին Սրբազնութիւն Կ. Պոլիս եկած է՝ նախ և առաջ՝ իւր մեծարանաց և հպատակական զգացմանց հաւաստիքը մատուցանելու յոտս գահոյից Օգոստափառ Վեհապետին։ Երկրորդաբար, օդափոխութիւն մ'ընելու և իւր առողջութիւնը կազդուրելու. զի թէպէտ եօթանասուն տարիներու բեռն իւր կռովի կազմուած քաջապէս տարած է մինչեւ հիմա, բայց այդ պատճառաւ իսկ կազդուրման պէտքն զգալի է։ Եւ երրորդ, Աթոռապատկան այլ և այլ գործեր կան որք անշուշտ հոգածութեան և փափուկ խնամոց առարկայ կ'ըլլան այնքան պարտաճանաչ և գործնական պաշտօնէի մը կողմէ, ինչպէս է Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան։

Կ. Պոլսոյ բարեպաշտ հայազգի ժողովուրդը գոհութեամբ կը տեսնէ որ Հայաստանեայց Եկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեայ մը միջոց կ'ունենայ Վոսփորի ափունքն անգամ մ'եւս այցելու՝ մեծարանաց պարտաւորութիւն մը կատարելու համար։ Փափաքող է որ Ն. Ամենապատուութիւն Կ. Պոլիս գտնուած պահուն իւր առողջութիւնը կազդուրելու կարող ըլլայ, առաքելահիմն Աթոռին տնօրինութիւններն աւելի եւս յաջողութեամբ ի գործ դնելու ֆիզիքական ոյժն ստանալու համար, և բարեմաղթու է, վերջապէս, որ դիւրութիւն վայելէ օգտակար ձեւով տնօրինելու ամենայն ինչ որ կը պատկանի այն պատուական Աթոռին գործերուն։

Յիշատակելի իրողութիւն մ'է, արդարեւ, որ Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան, Երուսաղեմայ Պատրիարք ընտրուելէն և իւր Աթոռը բազմելէն ի վեր, նոր փայլ մը տուած է այն Աթոռին, և ամենէն դժուար պարագաներու մէջ, իւր անդուլ հոգածութեամբ, ճարտար ղեկավարութեամբ և գործնական ոգւով յաջողած է Աթոռապատկան գործերն ըստ կարի բարւոք վիճակի վերածել։ Օգոստափառ ինքնակալին համարման արժանացած, կայսերական իշխանութեանց հետ բարւոք յարաբերութեանց մէջ գտնուած, իրեն համար իւր Աթոռին վրայ լաւ դիրք մը ստեղծած, և պատկառ ազդած է, ինչպէս որ կը վայելէ Երուսաղեմի Պատրիարքի մը։

Յայտնի է թէ Նուիրական Տեղեաց մէջ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը կարեւոր և փափուկ դիրք մը բռնած է, որ յարաժամ հոգածութեան առարկայ ըլլալու պէտք ունի։ Տնօրինական Սուրբ Տեղիք ուրեք ուրեք հասարակաց են այլ և այլ կրօնական դաւանութեանց, որք ընկերովի կը վայելեն զանոնք, բարեպաշտական պարտաւորութիւնները կատարել տալու համար իւրաքանչիւրն իւր հօտին, իւր դաւանակից հաւատացելոց խմբին։ Սոյն ընկերովի վայելման պարագայք ու պայմանք երբեմն կը կարօտին նորոգ կարգադրութեանց, ի բարձումն պարբերական տարաձայնութեանց, և Երուսաղեմի Պատրիարքներն յայտ միշտ աւելի կ'ունենան ի ցոյց բերելու իւրաքանչիւրն իւր ճարտարութեան, կենցաղագիտութեան, փափկանկատութեան և ազդեցութեան չափն։

Այսպիսի խնդիրներէ ու դէպքերէ զատ, Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր պաշտօնավարութեան յիշատակելի մէկ պարագան է Ս. Յակոբեանց Միաբանութեան պարտուց երբեմն անտանելի ծանրութենէն զգալապէս զեղչուիլն և տնօրէնելի համեմատութեան մը վերածուիլն, յորում կայսերական կառավարութեան շնորհած բարեհաճ դիւրութիւնք եւս չեն կրնար մոռցուիլ։ Թէեւ աւելորդ է ըսել թէ պարտքը լմնցած չէ, բայց այս գործի մէջ Ն. Ամենապատուութիւն և իւր օգնական Գեր. Սիմէոն Սրբազան այնքան ջանք և խնամք ցուցած են որ յուսալի է զի մօտ ժամանակէն նոր և կարեւոր զեղչ մ'եւս ըլլայ պարտուց քանակութենէն, գանձումներն ու վճարումներն ամբողջացուելով, և Ս. Յակոբեանց Աթոռն աւելի հանգիստ շունչ առնու, իւր հասոյթներուն մնացեալ մասն եւս բարեպաշտական հաստատութեանց գործածելով, փոխանակ տոկոսաց վճարման ամուլ գործին յատկացնելու յարաժամ։

Գաղափարաց ուրիշ կարգի մը մէջ, յիշատակելի է Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր պաշտօնավարութեան օրով և մասամբ եւս Ն. Սրբազնութեան անձնական զոհողութեամբք կառուցումն հասութաբեր նոր կալուածներուն, որք աւելի կամ նուազ ապահոված են Վանքին մատակարարութիւնն, և յապագային պարտուց ներքեւ իյնալու նոր փորձութիւններէ ըստ կարելւոյն զերծ կացուցած են զայն։ Այս կալուածներէ մի քանին մանաւանդ իրենց քաղաքարմար դիրքով և հասութաբեր վարձակալութեամբ արդէն կարեւոր սատար մը եղած են Ս. Յակոբեանց վանքին, որ շրջապատուած կը գտնուի այնպիսի հաստատութեանց կալուածներով ու նորոգ կառուցումներով որք բարեբախտութիւն ունին աւելի հարուստ եկամտացոյցներ վայելելու, և գրեթէ առանց մանրակրկիտ հաշուոյ ամեն տարի հազարաւոր ոսկիներ կարող կ'ըլլան ծախսելու։

Այս և յարակից պարագայներն ի մտի ունենալով, կը տեսնենք թէ Ամեն. Տ. Յարութիւն Սրբազանի Պատրիարքութիւնը ցայս վայր արդիւնքէ զուրկ չէ եղած, և ժառանգաւորաց Վարժարանին աւելի խնամ տարուելով, և առաւել գործերն ու խնդիրները տնօրինելով, անշուշտ աւելի մեծ արդիւնք յառաջ պիտի կրնան բերուիլ։ Յուսալի է որ Ն. Ամենապատուութիւն Կ. Պոլսոյ մէջ իւր առողջութիւնը կազդուրելով կարող ըլլայ մեծագոյն օգտակարութեամբ աշխատելու ի պայծառութիւն այն պատմական Աթոռոյն, որուն ի մանկութենէ անտի սրտաջերմ կերպիւ կապուած է իւր բոլոր կարողութեամբ, բոլոր սիրով և բոլոր անձնուիրութեամբ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ.— Պ. Քլէմանսօ չարաչար յաղթուեցաւ, և անոր անձին վրայ Արմատականութիւնը ծանր հարուած մ'ընդունեց Ֆրանսայի մէջ։ Յայտնի է թէ ինչ պատճառներով Քլէմանսօ ատելի եղած էր թէ՛ չափաւոր Հանրապետականներուն և թէ Պահպանողականներուն։ Չափաւոր Հանրապետականներուն ատելի էր. զի իւր ծայրայեղ պահանջումներով և անյագ փառասիրութեամբ շունչ առնուլ չէր տար չափաւոր նախարարութեանց, որոց տապալման համար յարաժամ կը դաւնկցէր հակահանրապետական տարրոց հետ։ Պահպանողականներուն ալ ատելի էր՝ Եկեղեցւոյ և եկեղեցականութեան դէմ գործելուն համար։ 1893 ի երեսփոխանական ընտրութիւնք Ֆրանսայի մէջ առաւելապէս չափաւոր գաղափարներու յաղթանակ եղան։ Բայց ամենէն աւելի զՔլէմանսօ կործանելու պատճառ եղաւ Քօրնէլիուս Հէրց։ Ֆրանսացւոց ազգային զգացումը վիրաւորեցաւ՝ տեսնելով որ իրենց խորհրդարանին մէկ երեւելի կուսակցապետն օտարազգի գործիչի մը դրամով կ'ապրի եղեր աւելի կամ նուազ։

ՕՏԱՐԱԶԳԻՔ Ի ՖՐԱՆՍԱ.— Այս պահուս, ապաքէն, օտարազգիներուն խուռն ընդ ակամբ կը նայուի Ֆրանսայի մէջ։ Իտալացւոց դէմ տեղի ունեցած ծայրայեղութիւնք ոչ միայն հակիտալեան զգացումը կ'արտայայտէին, այլ ընդհանրապէս օտարազգեաց դէմ չարժեալ զգացումը։ Ներքին գործոց նախարարն անցեալ շաբթուն ծանոյց թէ Ֆրանսա բնակող ամեն օտարազգի որ ֆրանսական ատեաններէ դատապարտութեան վճիռ մը կը կրէ՝ պէտք է քննութեան ենթարկի բարուց և վարուց մասին, և եթէ ամենափոքր արատաւոր հանգամանք մը գտնուի, բոլորովին արտաքսուի Ֆրանսայէն։ Ներքին գործոց նախարարը կ'ըսէ թէ «Այս տնօրէնութեան շնորհիւ կ'ուզենք երկրէն հեռացնել շատ մը կասկածելի մարդիկ, որք երբ զինուորական մեծ գործողութիւն մը հարկաւոր ըլլայ, տարակոյս չկայ թէ ճշմարիտ վտանգ մը պիտի դառնան Ֆրանսայի համար։» Այս տնօրէնութիւն ի գործ կը դրուի գլխաւորապէս ի խնդրոյ զինուորական իշխանութեանց։

Պ. ՔԱՌՆՕ.— Անցեալ երեքշաբթի բովանդակ Փարիզ արթնցաւ այն զարմանալի լուրը կարդալով թէ Պ. Քառնոյի առողջական վիճակին մէջ տխրական բարդութիւն տեղի է ունեցած։—Շատ չանցած, կառավարական զեկոյց մը հերքեց այս լուրը։ Քննութեամբ իմացուեցաւ թէ այնպիսի լուր մը ծագելուն պատճառն այս էր որ Տիկին Քառնօ հարկ զատեր էր իւր շաբաթական ընդունելութիւնները պահ մ'ընդհատել։ Ուրեմն, ամուսինն հիւանդ է, հետեւցուցած էին խմբագիրք ոմանք, հետաքրքրական լուրի պակասութեան մէջ։ Բայց ճշմարտութիւնն այս է որ շաբթուն մէջ օր մը յատկացնելով իւր հիւրերն ընդունելու, Տիկին Քառնօ աւելի պարտականութիւն մը կը կատարէ տարին 12 ամիս քան հաճոյք մը կը վայելէ, և միթէ բնական չէ՞ որ ինքն եւս քիչ մը ժամանակ հանգիստ խնդրէ՝ կազդուրուելու համար։

ԳԵՐՄԱՆՔ ՅԱՓՐԻԿԷ.—Օգոստ. ի երկրորդ շաբթուն մէջ, գերման զօրախումբ մը, հինգ ժամուան ճակատամարտէ մը ետքը, տիրեց ափրիկեցի սեւերու պաշտպանած մէկ ամրոցեայ գիւղին, Քիլիմա Նճարոյի կողմն (Արեւելեան Ափրիկէ)։ Գերմանաց և իրենց բնիկ զօրաց կորուստը քանի մը տասնեակը չեն անցնիր։ Գերման իշխանութիւնք մեծ կարեւորութիւն կուտան այս յաղթութեան։

ՖԻՐԻՏԱ, բնիկ գերմանացի Էմին փաշայի դուստրն, այժմ ինն տարեկան, Սիլիզիոյ Նայսէ քաղաքն հասաւ, և ընդհանուր ուշադրութեան առարկայ է հոն։ Էմին փաշայի քոյր Օր. Մէլանի Շնիցերի խնամոց ներքեւ է։ Ֆերիտա նրբակազմ աղջիկ մ'է, բայց որոշապէս կը նմանի իւր հօր, որոյ գործօն միտքն և լեզու սորվելու դիւրութիւնն ինքն եւս ցոյց կուտայ։ Կը խօսի արաբերէն, գերմաներէն, անգլիերէն, ֆրանսերէն և իտալերէն։ Արաբերէնն ամենէն աղէկ կը խօսի, յետոյ գերմաներէն, և ապա միւս լեզուները։ Կ'ըսէ թէ ինք Գերման է, և գերմանական կրթութիւն պիտի ընդունի։ Էմին փաշա, իւր վերջին արշաւանքին ձեռնարկելէ առաջ, յորում կ'երեւի թէ իւր կեանքը վրայ տուած է, ի Պագամոյօ գերմանական հաստատութեան մը յանձնած էր մեծակակ գումար մը, իւր աղջկան ապագան ապահովելու համար։

ԷՕԺԷՆԻ ԿԱՅՍՐՈՒՀԻՆ իւր յիշատակներն ի գիր առնելու վրայ է։ Ձեռագրի իւրաքանչիւր թերթը լմնցնելուն պէս, երկաթեայ ամուր սնտուկի մը մէջ կը դնէ և կը կղպէ։ Ո՛չ ոք տող մը կրցած է կարդալ, և իւր մահէն 25 տարի ետքը միայն պիտի հրատարակուի։

ԱՓՐԻԿԵԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆՔ.—Երեկ կը ծանուցանէինք Անգլիացւոց նոր ձեռնարկութիւնն ի Մաշոնալանտ կամ Զամպէզիա։ Այս երկիր որ այժմ Մաթապելէ ցեղը կը տիրէ, Մոնոմոթաբայից նախկին երկիրն է, որ դարերով յառաջ բաւական քաղաքակրթութիւն վայելած է հարաւային Ափրիկէի այն անանուն և կորուսեալ անկեան մէջ։ Ճամբորդներ կը տեսնեն նշանաւոր շէնքերու աւերակներ, որոց գլխաւորն է Զիմպապաի, որոյ պարիսպը հինգ մեթր լայնք ունին, ինն մեթր բարձրութիւն, միաձեւ միաչափ որձաքարէ (կրանիդ) քարակոյտերով շինուած, մուրճով յղկուած և կարգ կարգ շարուած, առանց շաղախով (ճոշ) բռնել տալու պէտք ունեցած ըլլալու։ Այս հսկայ շէնքեր թէ՛ բերդ էին, թէ մեհեան և թէ աստղագիտական դիտարան, և դիտարանաց վրայ որոշ կ'երեւի ճիշդ սեւեռութիւն մը երկնային մարմնոց շարժումներուն, որք այն հարաւային կլիմայից մէջ հակառակն են հիւսիսային կլիմայից։ Այսչափ պատուական ճարտարապետութիւն և գիտութիւն երբեք սեւամորթք ցոյց տուած չեն ոչ ուրեք. ուրեմն սպիտակամորթներու գործը պէտք է ըլլան, մանաւանդ որ մեհեանք Տիւրոսի, Սիդոնի և Կիպրոսի մէջ երեւցած հնէաբանական պաշտաման կը վերաբերին։ Ոմանք կը կարծեն Մաշոնաներու կամ Մաթապելէներու երկրին մէջ գտնել փիւնիկեան հին գաղթականութեան մը մնացորդները։

ԼՕ-ՊԵՆԿՈՒԼԱ, Մաթապելէներու վեհապետն, իւր հրամանաց ներքեւ ունի 20 հազար զօրաց բաւական լաւ զինեալ և մարզեալ բանակ մը, որք քաջութեան համբաւ հանած են Զուլուներէն ա՛լ աւելի։ Հարաւային Ափրիկէի բրիտանեան ընկերութիւն իւր սահմանափակ ոյժերով՝ չպիտի կրնայ յաղթել Տահոմէի Պէհանզինին թագաւորէն աւելի զօրաւոր այս ափրիկեցի վեհապետին, և պէտք պիտի ըլլայ որ Անգլիա ուղղապէս միջամտէ։

ԳԻՏԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

ԼՈՒՍՆՈՅ ԾԱՆՐՈՒԹԻՒՆԸ

Բ. (*)

Մոլորակներու մակերեւոյթներուն վրայ ծանրութեանց համեմատութիւնը

Արեգակ	27474	Երկիր	1000	Արուսեակ	0,864
Լուսնթագ	2581	Նեւտոն	0,953	Փայլածու	0,521
Երեւակ	1104	Ուրանոս	0,883	Հրատ	0,382
		Լուսին	0,164		

Այս ցուցակէ կը տեսնուի թէ լուսնոյ վրայի ծանրութեան զօրութիւնն ամենատկարն և արեգակի վրայինն ալ ամենազօրաւորն է։ Մինչդեռ լուսնոյ վրայ մէկ երկրային քիլօն 164 կրամ միայն կը կշռէ, արեգակին վրայ 27 քիլօ, լուսնթագին վրայ 2 ու կէս քիլօ կը կշռէ։

Այս տարբերութիւններն աւելի որոշ պիտի կարողանանք ըմբռնել, եթէ զանոնք վերածենք մի ճանապարհի. իւրաքանչիւր մոլորակի վրայ երեւակայենք մի աշտարակ (ամենն ալ հաւասար բարձրութեամբ) եւ հաշուենք որ եթէ այդ աշտարակներու գագաթէն ո և է մարմին մը (օրինակ՝ քար մը) վար ձգենք, իւրաքանչիւր երկրի վրայ անկման առաջին երկվայրկենին այդ մարմինն ո՛րչափ ճամբայ կը կտրէ։

Ենթադրենք ուրեմն թէ այդպիսի աշտարակներ շինուած են 13 մեդր բարձրութեամբ, և սկսինք քար մը ձգել, մոլորակէ մոլորակ ճամբորդելով (·)։ Անկման առաջին երկվայրկենէն վերջը Լուսնթագի վրայ արդէն քարը գետին հասած կը լինի, Երեւակի վրայ դեռ կէս ճամբան, Երկրի վրայ 4,90 մ., Նեւտոնի վրայ 4,80 մ. Ուրանոսի վրայ 4,30, Արուսեակի վրայ 4,21, Փայլածուի վրայ 2,55, Հրատի վրայ 1,86 եւ Լուսնոյ վրայ 0,80 մ. միայն։ Իսկ Արեւի վրայ նոյն փորձն յառաջ բերելու համար պէտք է երեւակայել թէ աշտարակը շինուած է 134 մեդր բարձրութեամբ ուղղաբերձ լեռան մը վրայ. մէկ երկվայրկենի մէջ քարն ամբողջ այդ բարձրութենէն զահավիժած պիտի ըլլար։

Այս հաշիւներն եղած են առանց ի նկատի առնելու մթնոլորտի դիմադրութիւնն, որ ըստ խտութեան կը նուազեցնէ անկման արագութիւնը։ Ապա թէ ոչ, ձգողականութիւնն և ծանրութիւնն ամբողջ տիեզերքի մէջ միեւնոյն օրինաց ենթակայ են։ Սակայն թերեւս Բնութեան մէջ կան այնպիսի զօրութիւններ զորս մենք չենք ճանչնար և որք այլ և այլ աշխարհներու մէջ ծանրութեան նման դերեր կը խաղան և կը տարբերեն ասոր ազատ գործունէութիւնն։ Օրինակի համար, եթէ մեզ անծանօթ լինէր մագնէսի գոյութիւնն, երբեք չպիտի կարողանայինք երեւակայել թէ մագնէսը ծանրութեան հակառակ ուղղութեամբ կրնայ իրեն քաշել երկաթեայ մարմիններ։

Անհաւանական չէ երեւակայել թէ երկաթն, որ քիչ քանակութեամբ միայն կը գտնուի մեր արեան և մկաններուն մէջ, աւելի մեծ չափով գտնուի մինչեւ տարբեր ձեւով կազմակերպեալ գործարանաւորներու մէջ և թէ մագնիսականութեան նման ազդեցութեանց մը այս մարմինները ձգուին մասնաւոր զօրութեամբ մը, որ անկախ ըլլայ ծանրութենէն։

Անհաւանական չէ նաեւ ենթադրել որ թերեւս մագնիսականութենէն տարբեր բնական զօրութիւններ կան, որք այլ և այլ աշխարհներու մէջ կը փոխեն ծանրութեան ոյժը և մինչեւ իսկ մարմինները կը վանեն մթնոլորտի ամենավերին խաւերուն մէջ…

Բայց փորձառական գիտութիւնը մինչեւ այժմ կրնայ հաշուել միայն զանգուածները, ծաւալները, խտութիւնն և ծանրութիւնը։

Ե՞րբ պիտի կարողանանք ծանօթանալ այն կենդանի էակներուն հետ որք անչափ այլազան ձեւերու տակ կը բնակին այս երկնային երկիրներուն մէջ։ Ե՞րբ կարող պիտի ըլլանք տեսնել զանոնք։ Բնութի՛ւն, ո՛վ անհուն, դարձուցելի և խորհրդաւոր Բնութիւն, ո՞վ պիտի կարողանայ երեւակայել, ո՞վ պիտի կարողանայ իմանալ քու երկնային քնարիդ ձայները։ Ի՞նչ կարողացեր է ըմբռնել մեր նորաբոյս մտաց գիտութիւնն իւր տղայական բանաձեւներով (formule)։ Մենք այբենարան մը կը թոթովենք, մինչդեռ երկնային աստուածաշունչը դեռ փակուած է առջեւնիս։ Բայց այսպէս կը սկսի ամեն ընթերցանութիւն, և այս առաջին բառերն աւելի ստոյգ և անվրէպ են քան մարդկային անսխալութեան և գիտութեան ամեն վաղեմի հաստատութիւնները։

---

[*] Տես. եւ վերջ երեկի թիւէն։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (21)

ԺԻՒԼ ԼԵՐՄԻՆԱ

ԲԱՐԻԶԻ ԳԱՅԼԵՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԵՌԵԱԼՆԵՐՈՒՆ ԱԿՈՒՄԲԸ

—Ո՛չ, ո՛չ, ըսաւ։ Բայց սակայն… ներեցէք ինձ եթէ կը վարանիմ… խնդիրը փափուկ է…

—Միտքդ պիտի բացատրե՞ս…

—Քանի որ Պ. Պառօնը կը պահանջէ, պարտաւոր եմ հնազանդիլ… արդ, գիտեմ թէ Պ. Պառօնը, շատ պարկեշտ ըլլալով չուզեր հոմանուհի ընել տիկին տը Թօրէյը, որուն զգացունել տուած է թէ… տիկին տը Սիվրըէյի առողջութիւնը շատ խախուտ է…

—Ատիկա իրաւ է։

—Չեմ տարակուսիր, ըսաւ Մանքալ ակնարկ մը նետելով դէպ ի Մաթիլտ, որուն կերպարանքը բոլորովին կը ջրէր իր ամուսնին խօսքերը։ Սակայն, խոստովանեցէք թէ տիկին տը Սիվրըէյ քաջաբար կը մարտնչի… զինք կրծող ախտին դէմ…

—Պատրա՛նք. կինս բռնուած է այն հիւանդութիւններէ մէկէն որք դատապարտեալին կուտան արտաքին առողջ կերպարանք… և որք սակայն քանի մը ժամուան մէջ կը չանթահարեն զայն…

—Լաւ, բայց տիկին տը Թօրէյ խելամուտ չէ բնախօսական այս գաղտնիքներուն… վասնզի կը վախնամ որ ձեր ամուսնական խոստումները կը վերագրէ ձեզ ներշնչած տարփանքին։

Աղէտալի ճառագայթ անցաւ պառոնին աչքերէն։

—Պարոն Մանքալ, ըսաւ խուլ ձայնով, երդում ըրի տիկին տը Թօրէյի որ իմ կինս պիտի ըլլայ… և կուզեմ…

—Կուզէ՛ք…

—Կը սխալիմ… այս բառ աղէկ չը բացատրեր միտքս… Գիտեմ, ըսել կուզեմ, թէ երբեք ամիս չանցած, ազատ պիտի ըլլամ…

—Ամէ՛ն, ըսաւ Մանքալ խոնարհելով, որպէսզի ծածկէ իր շուրթերը կծկող հեգնական ժպիտը։

Յետոյ, լռութենէ մը ետք յարեց.

—Մնաց որ, Ժէվրը քարափին գիտուն տոքթորը անոնցմէ է որք բնական գաղտնիքներուն մինչեւ խորը կը կարդան։

Պ. տը Սիվրըէյ զարմացման աղաղակ մը արձակեց։

—Ի՞նչ, գիտէ՞ք…

Մանքալ անոր երեսը նայեցաւ, այս անգամ յայտնապէս ծիծաղելով։

—Վաղը Պ. Պլաղիի տունը գացէք, ըսաւ։ Բարեկամական խորհուրդ մըն է զոր ձեզ կուտայ ձեր անձնուէր ծառան։

Սիվրըէյ պահ մը վարանեցաւ, յետոյ յարեց.

—Լաւ, պիտի երթամ։

—Պ. պառօնը բնաւ հրաման չունի՞ ինձ տալու։

—Բնա՛ւ։

Մանքալ մեծարանօք խոնարհելով հեռացաւ։

—Օ՛հ, մրմռաց խմբակներուն մէջ անհետ ըլլալով, ոճիրը ցանուած է… պէտք է որ ծլի… սանկ քարեր և արգաւանդ հողեր են… բայց ի՞նչ է Պ. տը Պելէնի գաղտնիքը։

Այս պահուս, դուքսին վերատեսուչը երեւցաւ սրահին դուռն, և կանգ առաւ, շուրջը նայելով իբր թէ մէկը փնտռէր։

Պ. տը Պելէն մօտեցաւ անոր.

—Ի՞նչ կայ։

—Պարոն դուքս, տարօրինակ, գրեթէ անարկու արարած մը, որ կ'ըսէ թէ Պ. Աւման տը Պեանէյի սպասաւորն է, անպատճառ կուզէ խօսիլ իր տիրոջ հետ…

—Պ. տը Պեանէյ խաղասրահներէն մէկը գտնուելու է։

Վերատեսուչն ուղղուեցաւ դուքսին ցոյց տուած կողմը։ Շատ դժուարութիւն չքաշեց Աւմանը գտնելու համար, որ, ժպտաշուրթն, կը հետեւէր պաքքարայի խաղի մը զոր կը խաղային քանի մը անձեր, Ստեֆան, Քօլոմպ, Ալլօռ և ուրիշներ։ Վերատեսուչին ցած ձայնով արտասանած առաջին խօսքերէն Աւման սարսռաց։

—Ձեզ կը հետեւիմ, ըսաւ։

—Մասնաւոր սրահը մտցուցի ձեր ծառան։

—Լաւ։

Պահ մը ետքը, Աւման գեղազարդ փոքր սրահ մը կը մտնէր։ Դուռն ետիէն գոցուեցաւ։ Զինք կանչել տուող անձը արժանի է նկարագրութեան։ Թուխ ձիթագոյն դէմքի մը մէջտեղ՝ տափակ ունգունքներով լայն քիթ մը կը հանգչէր. ոսկրոտ այտերը դուրս կը ցցուէին ճաբոնական դիմակի մը ցցուակներուն պէս. սաստիկ տժգունութենէ դեղինցած շուրթերով բերանը լայնօրէն ճեղքուած էր և ցոյց կուտար գրեթէ սեւ, բայց եղէնոսէ մատռի մը ծայրերուն պէս սուր ակռաներ։ Ճակատը կտծուած էր այլանդակ գծերով որք զիրար կը կտրէին երկրաչափօրէն։

Այս եզական արարած փաթթուած էր լայն վերարկուի մը մէջ որ մինչեւ մերկ ոտքերը կ'իջնէր։ Ճակատը, խորշոմած և անմազ, կիսովին ծածկուած էր տափակ, անեզր, կլոր գլխարկով մը, որ կարծես հրաշքով կեցած էր անոր սրածայր գանկին վրայ։ Եթէ գլխարկն հանուէր, պիտի երեւէր ենթագանկին կատարէն սկսող մազի փունջ մը, որ խնամով ինքն իր վրայ պլորուած էր տեսակ մը վարդի ձեւով։

Պ. տը Պեանէյ երեւնալուն պէս, տարաշխարհիկ ուրուականը ընդ առաջ երկարեց բազուկները և միեւնոյն ժամանակ գետին խոնարհեցաւ։ Քանի մը բառեր փոխանակուեցան լեզուով մը, զոր, արդարեւ, Պ. տը Պելէնի հրաւիրեալներէ ոչ մին չպիտի հասկնար։

—Ի՞նչ կուզես ինէ, Սօէրա, հարցուց Աւման։

—Նամակ մը կայ։

—Ո՞վ բերաւ։

—Երիտասարդ մը որ անմիջապէս մեկնեցաւ։

—Լաւ, տո՛ւր։

Այն որուն Սօէրա անունը կուտար Աւման, ձեռքը վերարկուին մէջ մխրճեց, որ կիսովին բացուեցաւ և ցոյց տուաւ ճերմակ և սեւ գիծերով տեսակ մը զենջակ որ մինչեւ ծնրակալերը կը հասնէր։ Իրանը ծածկուած էր մէջքէն մինչեւ անութներն եղող գօտիով մը, և այս գօտիին մէջ պահուած էր բոյաձեւ շեղբերով այն ահարկու զէնքերէ մին զոր Մալայացիները «քրիս» անունը կուտան։ Սօէրա Աւմանին տուաւ եռանկիւնաձեւ և սեւածիր փոքր նամակ մը, մեռելական նամակի մը պէս։ Աւման զարմացման շարժում մը ըրաւ։ Յետոյ, արագ շարժումով մը, ջախջախեց կնիքը։ Պահարանը դատարկ էր. միայն, պահարանին ներքին կողմը որոշապէս գծուած էր մեռեալի մը գլխուն պատկերը։ Աւման պահ մը խորհեցաւ, յետոյ.

—Գնա, Սօէրա, ըսաւ։ Լաւ ծառայ մըն ես դուն։ Տունս դարձիր և այս գիշեր ինծի սպասէ։

Սօէրա խոնարհեցաւ ի նշան հնազանդութեան։ Այս պահուս, Պ. տը Պելէնի ձայնը լսուեցաւ կիցը գտնուող սրահին մէջ։

—Տեսնենք, պարոններ, ձեզմէ ո՞վ պիտի հաճի Քօթիյօնը վարել…

Աւման, իրեն ուղղուած եզական խորհրդանշանին վրայ աչքերը յառած, կը մտածէր։ Տեսակ մը խուլ, վայրագ մռլտուք լսելով վեր առաւ գլուխը։ Սօէրա նետած էր վերարկուն, և իր ըմբիշի իրանը ցցելով դէպ ի ետեւ, գօտիէն դուրս հանած էր քրիսը որուն շեղբը կը շողար, սուր և մահասարսուռ։

—Սօէրա՛, ըսաւ Աւման հրամայական ձայնով մը։

Միւսը՝ ակռաները կճրտելով՝ ըսաւ մեղմիւ.

—Տէ՛ր, լսեցի՞ք։

Պ. տը Պելէնի ձայնը նորէն լսուեցաւ։

—Պարոն դերակոմս (անշուշտ կը խօսէր այն շուտիկ երիտասարդներէ մէկուն հետ որք իրենց ճամբան կը բանան վալսերու և մազուրքաներու մէջէ) պարոն դերակոմս, այս տիկիններ ձեր ազնիւ աջակցութիւնը կը խնդրեն, չէք կրնար մերժել։

Այս անգամ Սօէրա խոյացաւ, և անշուշտ պիտի անցնէր սրահին դուռնէն, եթէ Աւմանի ձեռքը իյնելով անոր դաստակին վրայ՝ կեցած տեղը չգամէր զայն։

—Խե՞նդ ես… գոչեց գիտունը։

Միւսը, հողագոյն դէմքը սաստիկ տժգունած, կարծես ա՛լ չէր լսեր։ Բերանը կը փրփրէր, և մէկ բառ մը կը խուսափէր բերնէն.

—Ամօ՛ք, Ամօ՛ք։

—Լռութի՛ւն, ըսաւ Պ. տը Պեանէյ։

Կռուի շարժումով մը՝ մինչեւ սենեակին խորն հրեց վայրենին. յետոյ, բազուկները խաչաձեւ, գլուխը բարձր, անոր առջեւ կեցաւ։

Սօէրա կը դողար. մոլեգին, գրեթէ ջղային յուզում մը ունէր։ Նորէն ըսաւ.

—Լսեցի՞ք…

—Ի՞նչ ըսել կուզես…

—Ան ձայնը…

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երուսաղեմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան՝ իւր հետն ունենալով Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդ Գեր. Միհրան արքեպիսկոպոս Մէֆէրեանն՝ երէկ առաւօտ կայս. պալատ գնաց և ընդունեցաւ առաջին սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի պէյի կողմէ։

Ն. Ամենապատուութիւն իւր հաւատարմական զգացմանց հաւաստիքը մատուցանելով, Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ իւր շնորհաւորութիւնները մատոյց և ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց և բարօրութեան Ն. Կ. Վեհափառութեան և վասն անսասան պահպանման օսմանեան փառապանծ գահուն։

Վսեմ. Հաճի Ալի պէյ գնաց Վեհ. Սուլթանին մատուցանել Տ. Յարութիւն Սրբազանի շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւններն և դարձաւ Ն. Ամենապատուութեան հաղորդեց Ն. Կ. Վեհափառութեան բարձր գոհունակութիւնն ու կայսերական բարեւները։ Տ. Յարութիւն Սրբազան կրկին անգամ բարեմաղթութիւններ ընելով մեկնեցաւ։

Ն. Ամենապատուութիւն նոյնպէս այցելութիւն տուաւ կայս. պալատան առաջին քարտուղար Վսեմ. Սիւրէյա փաշայի։

* * *

Տ. Յարութիւն Սրբազան այսօր Բ. Դուռը երթալով այցելութիւն պիտի տայ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Նախարարաց։

* * *

Երէկ, Պրուսայի առաջնորդ Գեր. Բարթուղիմէոս Սրբազան, Պատրիարքական Գեր. փոխանորդ հայրն, ուրիշ եկեղեցականք, Պատրիարքարանի պաշտօնէութիւնն և բազմաթիւ ազգայինք Երուսաղեմատուն երթալով բարի գալուստ մաղթեցին Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին, որ հակառակ ճամբորդութեան յոգնութիւններուն, ընդունեց բոլոր այցելուներն և իւր հայրական օրհնութիւնները ձօնեց։

Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրը, Երուսաղեմէն մեկնելու պահուն, պատրիարքական փոխանորդ կարգեր է Գեր. Նեեմիա արքեպիսկոպոսը։

Ուսուցչական Ժողովոյ երրորդ նիստը տեղի ունեցաւ երէկ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ, ատենապետութեամբ Իւթիւճեան Կարապետ էֆէնտիի։ Ատեանը բացուեցաւ ժամ 8ին, ի ներկայութեան 16 ուսուցիչներու։ Նախորդ նստի ատենագրութիւնը քանի մը դիտողութիւններով վաւերացուելէ ետք, Օրակարգի Բ. խնդրոյն վրայ խօսք առաւ Արիստակէս էֆ. Պօյաճեան և գրաւոր բանախօսութեամբ մը բացատրեց թէ ինչ կերպով թուաբանութիւնը կրնայ զարգացուցիչ մաս ըլլալ դաստիարակութեան։ Յետոյ խօսեցաւ Ռէթէոս էֆ. Թաղէոսեան և ներկայ տիրող մեթոտներու կիրառութեան վրայ տեսութիւն մը ընելով, անբաւական գտաւ զայնս։ Գալապանեան էֆ. բացատրեց ընթերցանութեան մէջ վերլուծական և համադրական եղանակը։ Այնուհետեւ վիճաբանութիւնը կեդրոնացաւ այդ եղանակին վրայ։

Ատեանը փակուեցաւ ժամ 10 ½ին, առանց վիճաբանութիւնն աւարտելու։

ՏԻԿԻՆ ՆՐԱՆՈՒՇԻ Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ
ԾՆԵԱԼ ՔԱՑՍԵՐԼԵԱՆ

Յետ սակաւօրեայ անողոք հիւանդութեան, կնքեց իւր մահկանացուն ի ծաղիկ հասակի, ի ցաւ և ի սուգ անմխիթար իւր ծնողաց, ամուսնոյն, եղբարց և քերց ու համայն ազգականաց ու բարեկամաց։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի վաղը, չորեքշաբթի, 25 օգոստոս, ի ժամ 4 առաւօտեան ի Ս. Խաչ եկեղեցւոյ Սկիւտարի, ուկից հանգուցեալ տիկնոջ մարմինը պիտի ամփոփուի տեղւոյն գերեզմանատունը։

24 օգոստ. 93
Սկիւտար

Կամուրջէն Սկիւտար ժամ 3.20ին շոգենաւ մը կայ։

Կը խնդրուի որ այս մահազդն իբր հրաւիրագիր նկատուի։

Ներքին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.— Եդեսիոյ Նայիպ անուանեցաւ Մէհմէտ Ֆէվզի էֆէնտի, նախորդ Նայիպ Մշոյ։

Էնկիւրիի Բէյփինէր գաւառակին Նայիպ անուանեցաւ Մուսթաֆա Ասըմ էֆէնտի, նախորդ Նայիպ Լանգազայի։

Այտընի Սալիհլու գաւառակին Նայիպ անուանեցաւ Սալիհ Սըրրի էֆէնտի, նախորդ Նայիպ Քէմէր Էտրէմիտի։

Սեբաստիոյ Միլաս գաւառակին Նայիպ անուանեցաւ Մուսա Քեազիմ էֆէնտի, նախորդ Նայիպ Թալմայի։

Գոնիայի Գարաաղաճ Ելվաճ գաւառակին Նայիպ անուանեցաւ Իպրահիմ Ֆէվզի էֆէնտի, նախորդ Նայիպ Արաճի։

Նոյն նահանգին Պօզքըր գաւառակին Նայիպ անուանեցաւ Մէհմէտ Թէվֆիգ էֆէնտի, նախկին Նայիպ Եապանապատի։

ՄԱԼԻՑԷԻ մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարուեցաւ երէկ, ընդ նախագահութեամբ նախարար Վսեմ. Նազիֆ փաշայի և ելմտական խնդրոց վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.— Մեծ-Եպարքոս Բարձր. Ճէվատ փաշա երէկ առաւօտ այցելութիւն տուաւ սերպիական դեսպան Պ. Վէլիմիրովիչի։

ՋԻՒԱ ՊԷՅ.— Ս——էն կ'իմանայ թէ Վիեննայի օսմանեան դեսպան Ջիա պէյ արձակուրդ ստացած ըլլալով, նախընթաց օր Վիեննայէն ճամբայ ելեր է մայրաքաղաքս գալու համար։

ՊԵՏԱԿԱՆ Խորհուրդը քննելով Կ. Պոլսոյ Արուեստահանդէսին համար պատրաստուած օրինաց ծրագիրը, տեղեկագրով մը մատուցած է զայն Բարձր. Մեծ Եպարքոսին։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ անկելանոցի կառուցումը փութով կատարելու համար, կայս. Իրատէ մը հրամայած է 150,000 ղրուշ տալ շինութիւնը յանձն առնող ճարտարապետին։

ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐ.— Տպագրական տեսչութիւնը նկատելով որ Ս——ն լրագրոյն մէջ, հակառակ եղած կրկին պատուէրներուն, ինչ ինչ սխալներ կան, խստիւ յանդիմանած է արտօնատէրն, և բացարձակապէս ծանուցած է որ եթէ այդ ընթացքը կրկնէ՝ հարկ եղած պատիժն ի գործ պիտի դրուի։

ՍՈՒԼԹԱՆԻՑԷ վարժարանն աւելի կանոնաւոր վիճակի մը վերածելու նպատակաւ ուսմանց ծրագիրը բարեփոխուելու վրայ է։ Երկրորդական ճիւղն ալ նոր կազմակերպութիւն մը պիտի ստանայ։

ՂԱԼԱԹԻՈՅ մաքսատան մէջ գործուած զեղծումներուն համար ամբաստանեալ պաշտօնէից հարցաքննութիւնք, որք կը կատարուէին Բերայի հարցաքննիչ դատաւորին կողմէ, աւարտած և տեղեկագիրք շաբաթ օրը յանձնուած են Բերայի ընդհանուր դատախազութեան, որ այդ մասին սկսած է կատարել օրինական հարկ եղած գործողութիւնները։

ՊԵՐՈՒԹԻ լրագրոյն մէջ կը կարդանք թէ կայս. Իրատէի մը համաձայն պատ մը պիտի քաշուի Սուրիական Տրիպոլսոյ նաւահանգստին այն տեղը, ուր թաղուած են ընկղմեալ Վիքթորիա զրահաւորին զինուորաց ոմանց դիականներն և միանգամայն կոթող մը պիտի կանգնուի։ Ծախքը պիտի վճարուի կայս. կառավարութեան կողմէ։ Այդ պատերուն ու կոթողին յատակագծերն ու որոշեալ ծախուց տոմարը մատուցուած է կուսակալութեան և հարկ եղածն ի գործ պիտի դրուի։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.— Այտընի կուսակալը հեռագրած է Ներքին գործոց նախարարութեան թէ օգոստոս 21էն 22, Իզմիրի մէջ կասկածելի հիւանդութենէն վարակուեր են 8 անձեր, որոց 1ն՝ իսլամ, 1ը՝ յոյն, 1ը՝ կաթոլիկ և 5ը՝ հրեայ։ Ասոնցմէ երեք մահեր պատահած են, 1ը՝ յոյն, 1ը՝ կաթոլիկ և 1ը՝ հրեայ։ Առաջուան բռնուածներէն ալ մեռած են 2 իսլամ ու 3 հրեայ։

—Կայս. Իրատէ մը հրամայած է բժշկական յանձնաժողով մը ղրկել՝ Իզմիրի առողջապահական արգելի վիճակն աւելի բարեկարգ եղանակի մը վերածելու համար։ Այդ յանձնախումբը կը կազմեն դէր-գնդապետ Ձօրճի Ճանքօ պէյ ու Նիամէն պէյ, հազարապետ Մէհմէտ Էմին ու Ահմէտ Հիլմի էֆէնտիներն և հարիւրապետ Մէհմէտ պէյ։ Ասոնց ճամբու ծախքը տրուած ըլլալով, առաջին առթիւ Իզմիր պիտի ուղեւորին։

—Կայս. Իրատէ մը արտօնած է առողջապահական վարչութեան խնայողութենէն վճարել՝ Գավաքի մաքրանոցին պահպանութեանը համար շինուելիք [illegible]ներու համար հարկ եղած 40000 ղրուշի ծախքը։ Շինութիւնք այս օրերս պիտի սկսին։

ԱՆՕԳՈՒՏ ԴԵՂ ՄԸ.— Այս աւուր Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ պաշտօնական յայտարարութիւն մը կը ծանուցանէ թէ անգլիական դեղարանին մէջ ի վաճառ հանուած Կուտինա օշարակն, որ մայրաքաղաքիս մէջ ցարդ մեծ քանակութեամբ վաճառուած է՝ խաբուելով անոր բազմազան օգուտներուն նկատմամբ եղած յայտարարութիւններէն, բժշկական վարժարանին մէջ տարրալուծուելով հաստատուած է թէ պարզ օշարակ մ'է և յայտարարուածին նման օգտակարութիւն մը չունի. ուստի պաշտօնական յայտարարութիւնը զայս կը ծանուցանէ, որպէս զի այդ օշարակի իսկական վիճակն ու անօգուտ ըլլալը գիտցուելով, յետ այսօրիկ ոչ ոք խաբուի։

ՆԷՕԼՕՂՕՍ լրագիրն, որ հինգշաբթի օրուընէ ի վեր անպայման կերպիւ դադարման դատապարտուած էր, այսօրուընէ վերստին հրատարակուիլ պիտի սկսի։

ՕՍՄ. ՊԱՆՔԱՆ անցեալ շաբաթ օր արքունի փողերանոցը ղրկած է 140,000 անգլիական ոսկի՝ օսմանեան ոսկւոյ վերածուելու համար։ Ի մօտոյ 100,000 անգլիական ոսկի եւս պիտի ղրկուի մի և նոյն նպատակաւ։

ՊԱՇՏՕՆԱՆՇԱՆՔ.— Կառավարական պաշտօնէից ու քարտուղարաց շնորհեալ պատուանշաններն յետ այսօրիկ պիտի ղրկուին իւրաքանչիւրին պատկանած պաշտօնատուն և անոնց կողմէ տէրերուն պիտի յանձնուին։

ՇՈԳԵՇԱՐԺ ԹՐԱՄՈՒԷՅ.— Բարձր. Մեծ Եպարքոսը ծանուցած է Հանրօգուտ շինութեանց նախարարութեան՝ քննելու համար Պետական Խորհրդոյ օրէնսդիր ճիւղին ղրկել պայմանագրութեան ու յանձնառագրոյ այն ծրագիրն, որք կը վերաբերին՝ Թէփէ Պաշիէն Թաթավլայի ճամբով ի Շիշլի շինուելիք շոգեշարժ թրամուէյի մը համար խնդրուած մենաշնորհին։

ՆՈՐ ԳԻՒՏ ՄԸ.— Նաչիտ պէյ անուն արհեստագէտ մը նոր կղպէք մը հնարած է, որով թէ՛ հին օսման և թէ՛ նոր օսման մէկ [illegible] կը կղպուի։ Նոյնպէս հնարած է տեսակ մը գործիք, որ թէ՛ եւրոպական և թէ՛ թրքական ժամերը միանգամայն ցոյց կուտայ։ Այս երկու գիւտեր Վեհ. Սուլթանին մատուցուելով, արժանացած են Ն. Վեհափառութեան բարձր գոհունակութեան։ Հնարիչը՝ Նաչիտ պէյ՝ այս առթիւ արժանացած է կայսերական մեծարանաց։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ և Թղթատարական վերատեսուչ Հասան Ալի էֆէնտի, որ մէկ քանի օրէ ի վեր հիւանդ էր, սկըսած է ապաքինիլ և ի մօտոյ պիտի կրնայ իւր պաշտօնատեղին երթալ։

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Այս աւուր Ս——ն սոյն խորագրով տեսութիւն մը կընէ գաղթականութեանց վրայ ըսելով որ Ռումանիաէն, Պուլկարիաէն և այլ տեղերէ մէկ քանի տարիներէ ի վեր գաղթականներ կուգան մայրաքաղաքս որք այլ և այլ գաւառներ կը ղրկուին բնակութիւն հաստատելու համար և շնորհիւ Վեհ. Սուլթանին՝ իրենց ուտելիքի ու ցանքի համար արմտիք կը տրուին, բնակարանի համար ատաղձ, մշակութեան համար հող և վերջապէս անոնց ամեն պէտքն հոգացուելով ամենայն հանգստութեամբ ու երջանկութեամբ կապրին. սակայն, կը յարէ Ս——ն, գլխաւոր խնդիրն է գիտնալ այս գաղթականութեանց շարժառիթը, որովհետեւ, ինչպէս յայտնի է, գաղթականները մեծամեծ զոհողութիւններ յանձն կառնուն իրենց արտը տունն եայլն ոչինչ գնով մը ձեռքէ հանելով։ Այդ գաղթականք նոյն զոհողութիւնները յանձն առած են, որովհետեւ իրենց տեղերուն մէջ ունեցած կալուածներէն ու արտերէն իրենց օրինաւոր շահը վտանգուած ըլլալէն զատ՝ աւելի՛ց աւելի մեծ զրկումներու ենթարկուած են, հետեւաբար իրենց անձը պաշտպանելու և ապագան ապահովելու համար ստիպուած են թողուլ կալուածնին ու հողերնին։

Արդ, կ'ըսէ Ս——ն, զարմանալի է որ Եւրոպեան լրագիրք ոմանք երկար զրոյցներու դրամագլուխ մը բրած են՝ հազար տեսակ խաբկանքներէ ու թելադրութիւններէ խաբուած մէկ քանի հայերու օսմանեան երկիրներու այլ և այլ կողմերէն՝ օտար երկիրներ գաղթել ուզած ըլլալնին։ Այդ լրագիրք մոլեռանդական կարգ մը հրատարակութիւններ ըրած են, ըսելով որ իբրեւ թէ անոնք օսմանեան երկրաց մէջ անդորրութիւն ու խաղաղութիւն չեն վայելեր։ Լրագրական նոյն տեղեկութիւններէ կը հասկցուի թէ օսմանեան երկիրներէն գաղթող այդ անձեր իրենց գացած տեղերու մէջ բաւական թշուառութիւն կը քաշեն և մեծ մասն ալ իրենց բնավայրը թողած ըլլալնուն համար վերջին ծայր զղջացած են։

Եւրոպական լրագիրք, որք եղած մասնաւոր թելադրութեանց վրայ ասկէց գաղթող հինգ-տասը անձանց գաղթելը կը չափազանցեն, ինչո՞ւ փոքր խորհրդածութեան մը իսկ արժանի չեն դատեր սա պարագան թէ Ռումանիաէն, Պուլկարիաէն և այլ տեղերէ ամեն շաբթու հարիւրաւոր և հազարաւոր անձեր կը գաղթեն, թէ այսչափ տարիէ ի վեր հազարաւոր անձինք գաղթելով եկած են, թէ ասոնք իրենց երկրին մէջ ունեցած այդչափ կալուածներն ու հողերը աժան ծախելով և երբեմն ալ առանց փոխարէնի թողլով՝ հոս ապաստանիլն իրենց համար մեծ երջանկութիւն մը համարած են։

Օսմ. կայս. կառավարութիւնը, կ'ըսէ Ս——ն, իւր ծագումէն ի վեր իւր արդարասէր հովանոյն ներքեւ առած երկիրներուն մէջ ամեն կարգի հպատակաց ազատութիւնն առանց բացառութեան ապահովցուցած է։ Նա մանաւանդ հինգ-վեց հարիւր տարի առաջ կրօնական այն ազատութիւնն, զոր օսմանցիք տուած էին ոչ-մահմէտական ազգերուն, ամենէն քաղաքակրթեալ երկիրներու մէջ ոչ միայն գոյութիւն չունէր, այլ մտքերնին անգամ եկած չէր։ Այս պարագային վրայ եւրոպական պատմագիրներն ալ համոզում գոյացուցած են։ Քանի որ օսմանեան կառավարութեան արդարասէր և ուղիղ ընթացքն, որ է կեանքի ու ստացուածքի պահպանութիւն և խղճի ազատութիւն, այսօր ալ ամբողջութեամբն ի գործ կը դրուի, ուրիշ տեղերու իսլամաց և այլ բնակչաց Կ. Պոլիս գաղթելու ստիպումներն՝ ընչի՞ց, կեանքի ու պատւոյ և խղճի ազատութեան պահպանման տեսակէտով՝ ներկայ քաղաքակրթեալ դարուն պահանջմանց կը համապատասխանէ՞ թէ ո՛չ։ Այս հարցումը եթէ ուղղենք եւրոպական լրագրերու, կարծենք թէ շատ դիւրութեամբ պատասխան չպիտի կրնանք ստանալ։

ԳԱՂԹԱԿԱՆՔ.— Էսկի Ճումաայի 68 գաղթականներ, որք Ադրիանուպոլսոյ ճամբով մայրաքաղաքս եկած էին, երէկ առաւօտ Պրուսայի նահանգը ղրկուեցան հոն բնակութիւն հաստատելու համար։

ԿՐԵՏԷի մէջ Էբրաֆելօս անուն յունարէն նոր լրագիր մը սկսած է հրատարակուիլ։

ՌՕԶԻՍԱՐՔ.— Քաղաքապետութիւնն իմանալով որ ի Ճէնտէրէ՝ Թանաչի փարախը գտնուող ոչխարաց ու այծերու մէջ հիւանդութիւն մը երեւան եկած է, Քեազըմպանէ գիւղէն և նոյն տեղէն պաշտօնեայներ ղրկելով այդ փարախն հսկողութեան ներքեւ առնել տուած է։

ԱՅՏԸՆԻ երկաթուղւոյ կառախումբը Տիրէէն գալու պահուն Թուրք կին մը կոխոտեր է, մարմինը մէկ քանի կտոր ընելով։ Խեղճ կինն, որ կոյր է եղեր, իւր մէկուկէս տարեկան տղան իշու մը վրայ նստեցուցած երկաթուղւոյ ճամբէն կանցնի եղեր, երբ յանկարծ կառախումբն երեւան ելեր է։ Կինը թէեւ յաջողեր է տղան ազատել, սակայն ինք ճամբուն մէջ մնացեր է։

ԳՈՂՈՒԹԻՒՆ.— Ս——ն կ'իմանայ թէ Տէրսիմցի մէկ քանի գողեր Խարբերդ գիւղաքաղաքի Գօզապատ գիւղերու ճամբաներուն վրայ կողոպտեր են գիւղացիները և տեղական կառավարութիւնը խուզարկութեանց ձեռնարկած է այդ գողերը ձերբակալելու համար։

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ կեդրոնական հրամանատար Հագգը փաշա Խարբերդ գացեր է օդափոխութեան համար։

ՏԷՆԻԶԼԻի նախորդ կառավարիչ Շէրէֆ փաշաի համար, որ եղած բողոքներու վրայ դատաստանի ենթարկուած էր, դատաստան տեղի չունենալու որոշում տրուած է՝ վաւերացեալ Այտընի նահանգին Իտարէի ժողովոյ նախագահին կողմէ, որովհետեւ բողոքոյ նիւթ եղող խնդիրներուն համար Շէրէֆ փաշաի՝ ըստ օրինի դատաստան հրաւիրող և պատիժ յառաջ բերող յանցանքի վերաբերեալ մէկ արարքը հաստատուած չէ։

ԿԱՐՆՈՅ կուսակալութիւնը նկատելով որ այդ տեղ ծովէն հեռու ըլլալով շաքարի իւրաքանչիւր օխային համար 50 փարա ծախք մը կ'ըլլայ, որով շաքարն այդ տեղերու մէջ բաւական սուղ գնով կը վաճառուի և նկատելով որ Կարնոյ նահանգը ճակնդեղի մշակութեան յարմարութիւն ունի, գրած է երկրագործական նախարարութեան թէ շաքարի գործարանի մը հաստատութիւնը բաւական օգտակար պիտի ըլլայ։ Նախարարութիւնն ալ նկատողութեան առած է այդ առաջարկը։

ԵՐԿՐԱՇԱՐԺՔ.— Օգոստոս 20 ին Պանտըրմայի մէջ և 19ին ալ Միխալըճի մէջ երկրաշարժի սաստիկ ցնցմունք զգացուեր են։ Օգոստոս 18 էն 22, Մանասըրի Կէօրիճէ գաւառին մէջ ամեն օր երկու երեք անգամ երկրաշարժի ցնցմունք զգացուեր են։

ԺԱՄԱՆՄՈՒՆՔ.— Երէկ մայրաքաղաքս ժամանեցին Քաղաքապետութեան Ժողովոյ առաջին քարտուղար Մահմուտ պէյ՝ Գասթամունիէն և Պրիւսէլի օսմանեան դեսպանատան երրորդ քարտուղար Մազհար պէյ՝ ու Վիէննայի օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար Ահմէտ Ձէքի պէյ՝ իրենց պաշտօնատեղիներէն։

ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց ժողովն ընդունելի դատած է Րումէլիի երկաթուղւոյ ընկերութեան առաջարկը՝ Սիրքէճի ու Այաստեֆանոսի մինչեւ երկաթուղւոյ երկրորդ գիծ մը շինելու համար, որպէս զի այդ կողմերու բնակչաց դիւրութեանը համար երթեւեկող կառախմբոց թիւն աւելցուի։ Հանրօգուտ շինութեան ժողովն որոշած է ընկերութենէն պահանջել այդ նոր գծին քարտէսներն ու յատակագծերը։

ԿԱՐԿՈՒՏ.— Անցեալ կիրակի օր Ադրիանուպոլսոյ Սուլթան Եէրի գաւառակին շըրջակայից մէջ կարկուտ տեղալով վնասեր է ծխախոտներուն, այգիներուն և այլոց։

ՄՈՒՍՈՒԼի մէջ օգոստոս 7 ին ու 8 ին մէկ քանի անգամներ երկրաշարժի ցնցմունք զգացուելով մէկ քանի պատեր փլեր են։ Կառավարական պաշտօնատան մէկ քանի սենեակներու առաստաղները անբնակելի ըլլալու չափ վնասուեր են։ Թղթատարական պաշտօնատան պատն ալ երկու մեղրի չափ փլեր է։ Մարդու և անասնոց կորուստ չէ պատահած։ Հարկ եղած միջոցները ձեռք առնուեր են կարօտ անձանց տուները նորոգելու համար։

ՀԱՐՍԱՆԻԹ.— Ի Խարբերդ տղայոց մէջ հարսանիթ երեւան եկած է, սակայն ցարդ մէկ մահ միայն պատահած է և հիւանդներն ալ կը դարմանուին։

ՀՐԴԵՀ.— Երէկ գիշեր ժամ 3 ին Եէնի գաբուի դուրսը եազմայի գործարանէ մը հրդեհ ծագելով, ամբողջ շէնքն այրեցաւ։

ԹԱՐԱՊԻՈՅ մէջ այս օրերս Տէսբինօ անուն յոյն կին մը մեռած էր։ Ոստիկանութիւնն իմանալով որ այդ կնոջ մահը յառաջ եկեր է Ջէրրահ Մուսթաֆա անուն մարդու մը կողմէ տրուած դեղահատէ մը ու ջուրէ մը, այդ անձը ձերբակալեր ու քննութեանց ձեռնարկեր է։ Մուսթաֆա ըսեր է թէ այդ դեղերը վնասակար չէին։ Թաղապետութեան բժիշկներն ալ տեղեկագրած են թէ Տէսբինօ երկու տարիէ ի վեր հիւանդ ըլլալով բնական մահուամբ մեռած էր, սակայն հարկ դատուեր է դիահերձութիւն մը կատարել դեղահատին ու ջուրին ազդեցութիւնը հասկնալու համար և թաղուելուն արտօնութիւն չէ տրուեր։

Պ. ՕՐԹԷԿ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԹՈՒԱԾ.— Կիրակի իրիկուն խուռն բազմութիւն հաւաքուած էր Թէփէ-Պաշիի պարտէզը, տեսնելու համար Պ. Օրթէկի — հանրածանօթ [illegible] — և հեծելանուորդներու միջեւ կատարուելիք մրցումը։ Անշուշտ շատեր տեսան այն պոռոտ մեծամեծ ազդերը որոց մէջ Պ. Օրթէկ կը գրէր կ'անցնէր ի՛նչ արագավազ բան որ կայ աշխարհքի մէջ, ձի, երկաթուղի, հեծելանիւ եւն։ Ուստի մրցումն հետաքրքրաշարժ էր։ Շոգեմարդուն մրցակիցներն էին ֆրանսացի մը Պ. Ֆեռնան, և յոյն մը Պ. Լէանտրոս։ Մրցման պայմանն էր մէկ ժամուան մէջ պարտէզին շրջանն 120 անգամ կատարել։ 84 րորդ շրջանին, հելլէնը ինկաւ հեծելանիւէն և որովհետեւ սարուածը կոտրեր էր, ստիպուեցաւ ետ կենալ մրցումէն։ Այն ատեն ասպարէզը մնաց շոգեմարդուն և ֆրանսացիին, որ ընտիր հեծելանիւ մը ունէր։ Երբ մէկ ժամը լրացաւ, Պ. Ֆերնան 122 անգամ դարձած էր պարտէզին շուրջը, իսկ Պ. Օրթէկ, հէ՛ք շոգեմարդը, հազիւ կրցած էր հարիւր անգամ դառնալ։

Ականջը խօսի Սըչանին։

ԻԶՄԻՐԻ Ամալթէա լրագիրը կը հաղորդէ թէ համաճարակը որ հրէից թաղերուն մէջ կեդրոնացած էր մինչեւ հիմայ, սկսած է ճարակիլ նաեւ հրեայ և քրիստոնեայ բնակիչ ունեցող խառն թաղերուն մէջ, գլխաւորաբար ի Պէթճանէր, Պաղչէ և Պասմահանէ։ Ձեռք առնուած ապահովական միջոցներուն շնորհիւ, Ֆասուլա կոչուած կեդրոնական թաղը զերծ կը մնայ։

—Իզմիրէն Վուրլա և Չէշմէ բանող փոքր շոգենաւերն ալ քարանթինայի ենթարկուեր են։

ԷՏՐԷՄԻՏԷՆ Ստ——լի ուղղուած նամակ մը կը պատմէ թէ մօտակայ Աւզըլար գիւղին մէջ ահռելի արկած մը պատահեր է։ Շաբաթ գիշեր գիւղին բոլոր տուները դղրդեր են ահագին պայթումէ մը, որուն կը յաջորդէին աղեկէզ ճիչեր և հրդեհի առաջին բոցերը կերեւէին գիւղին կեդրոնը։ Տեղւոյն վաճառականներէն Եանի Եօանու անուն անձին մթերանոցը օդը կելլէր կուտակուած մեծաքանակ վառօդին պատճառաւ, բռնկցունելով նաեւ քովի շէնքերը։ Դժբաղդ Եանին, իր անխոհեմութեան զոհ երթալով, պատառ պատառ եղած է. իր դրացիներէն հինգն ալ ծանրապէս վիրաւորուեր են։ Հրդեհին առաջքը շուտով առնուեր է։

Կը ծանուցուի թէ Տոքթ. Վահրամ Յ. Թորգոմեանի Բերայի մէջ ունեցած մասնաւոր դարմանատունը փոխադրուած է Բերա, ՄԵԾ ՓՈՂՈՑԻ վրայ թիւ 96 ընդարձակ տունն, ուր հինգշաբթէ և կիրակէ զատ ամեն օր հիւանդ կ'ընդունուի ժամը 7էն 10 ը. թ. 766 1—24

ԱԶԴ.— Մօտակայ գաւառակի մը մէջ պաշտօնավարելու համար երկու գրագրի պէտք կայ, տոմարակալութեան հմուտ։
768 1—4

ԱԶԴ.— Խնամակալութիւնս կը փութայ յայտարարել յարգոյ գիւղացւոց թէ՝ Հիփսիմեանց վարժարանն իւր Մանկապարտէզովը պիտի բացուի յառաջիկայ Օգոստոս 23 երկուշաբթի օր։
Ուստի կը խնդրենք Պատ. ծնողքներէն որպէս զի բարեհաճին նոյն օրը իրենց զաւակներն յղել ի վարժարան։
Օրթագիւղ, 14 Օգոստոս 1893
Թիւ 742 2—3

ՀԵՌԱԳԻՐ
ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՓԱՐԻԶ, 4 Սեպտ.— Ըստ պաշտօնական տեղեկութեանց, նոր Երեսփոխանութեան կ'անդամակցին 409 հանրապետականք և արմատականք, 79 արմատականք-գործաւորականք կամ պարզ գործաւորականք, 29 աջակողմեանք յարեալ ի հանրապետութիւն և 64 պահպանողականք։ Չեն կրցած ընտրուիլ նաեւ Պ. Ֆլոքէ և Պ. տը Սուպէյրան։ Փարիզի երեսփոխանք են՝ հինգ արմատականք, եօթն գործաւորականք, երեք հանրապետականք և մէկ պահպանողական։

ՄԷՑ.— Վիլհէլմ կայսրն այս քաղաքն հասնելուն, զօրքն և բնակիչք եռանդալից ընդունելութիւն ըրին։ Ի պատասխանի քաղաքապետին, կայսրն ըսաւ թէ Մէց և իւր զօրքերն առանցքն են Գերմանիոյ զինուորական զօրութեան և սահմանեալ են պահպանել խաղաղութիւնն յօգուտ Գերմանիոյ և Եւրոպիոյ։

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 24 Օգոստոս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ		
3 ամիս Լոնտրայի վրայ		109 5/8
3 » Փարիզի »		23 05
ՕՍՄԱՆԵԱՆ ՔՕՆՍՕԼԻՏԷ		
Երէկ երեկոյ գոց. [Միաց. Դ. Սէրի]		24 22
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	24 23
Կէս օրին	»	24 23
Թահվիլաթը Օսմանիյէ երէկ երեկոյ		— —
» » ժամ 5ին		— —
ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ		
Փոխառութիւն Ա. Սէրի		54 50
» Բ. »		34
» Գ. »		25 23
ԲԱԺՆԵՏՈՄՍՔ		
Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	— —
Քրէտի Ժէնէրալ	» »	7 20
Պանք տը Բօնս	» »	3 05
Օսմ. Շանժ է վալէօր	» »	4 05
Րէժի	Օսմ. Ոսկի	16 33
Թրամուէյ	» »	590
Օսմ. Ապահովագր. Ընկ	» »	325
Րումէլիի Երկաթուղի	Ֆր.	86 75
Բաժնեթղթ Լաւրիօնի		33
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ		
Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 18
Անգլիական ոսկի	»	110 09
Մարք [Գերմանական ոսկի]	»	107 05
Իմփէրիալ	»	90 10
Քըլիմիգ	»	51 15
Վուալ թղթադրամ	»	8 78
Մէճ. արծաթ [տարբ.]	»	107 38
Մանր արծաթ	»	103
Մէթալիք	»	97
Թասֆիյէ	»	— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի	»	6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 4 Սեպտեմբեր	
Ֆրանսական Ռանթ 3 %	99 47
» » 4 ½ %	104 65
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Դ.	22 75
Օսմ. մաքս. արժեթուղթ	485 62
Բրիօրիթէ Թիւրք (1890)	455
Օսմանեան Երկաթուղի	87 37
» Րէժիի բաժնեթուղթք	386 25
Պանք Օթօման	583 43
Քրէտի Լիօնէ	776 25
Իտալական Ռանթ 5 %	84 37
Եգիպտական միացեալ	510
Չէք Լոնտրայի վրայ	25 330
Օսմանիյէ Օսմանեան քոնսոլիտէ)	412 50
ԼՈՆՏՈՆ, 4 Սեպտեմբեր	
Անգլ. քոնսոլիտ	97 37
Օսմ. » Սէրի Դ.	22 37
» » » Ա.	54 50
» » » Բ.	34 50
» » » Գ.	23 62
Օսմ. փոխառութիւն 1871	98 50
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	96 25
Պանք Օթօման	13 18
Այտընի երկաթուղի	11
Խասապայի երկաթուղի	13 50
Եգիպտական միացեալ (ունիֆիյէ)	100 12
» առանձ. (բրիվիլէժիէ) 1890	— —
Տօմէնիալ (փոխառ. Ռօչիլտ)	102 75
Հելլենական 5 %	36 50
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 500
ՎԻԷՆՆԱ, 4 Սեպտեմբեր	
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 40
» Փարիզի »	48 20
Օսմանեան Րէժիի բաժնեթուղթք	189
» Երկաթուղի	49 20
ՊԵՐԼԻՆ, 4 Սեպտեմբեր	
Օսմանեան Երկաթուղի	83 70
Օսմ. Րէժի	190
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 255
» Փարիզի »	80 40

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Մոսկւայում մեր աշխատակիցներից մէկը առիթ ունեցաւ տեսնելու հայ կնոջ մի գեղեցիկ ձեռագործը—գարուսի և մետաքսի բազմագոյն թելերից գործած՝ պատից կախելու մի մեծ գորգ։ Նուրբ ճաշակով, գոյների ներդաշնակ ընտրութեամբ և ամբողջ ամիսներ անձանձիր եռանդով կատարած այդ գործը, որ պատկանում է տիկին Քեթեւան Ժամհարեանցին, շատ հրապուրիչ տպաւորութիւն է թողնում նայողի վրայ։ Տիկինը այդ գործը պատրաստել է յատուկ Էջմիածնի նուիրելու համար։

—Թիֆլիսում յայտնի ոսկերիչ Պ. Կարապետ Յ. Սերովբեանը, որ երկու տարի սրանից առաջ գեղարուեստական իր արհեստի համար ընդունեց Պարիզի ազգային գեղարուեստական Ակադեմիայի պատուաւոր անդամ, այս օրերս էլ ընտրուել է պատուաւոր անդամ-թղթակից նաեւ Պարիզի գիւտահնարների Ակադեմիայի — Académie Parisienne des inventeurs industriels et exposants, fondée en 1889։ Երկու Ակադեմիաներից եւս պարոնը ստացել է առաջին կարգի ոսկէ մեծ նշանադրամներ։ Պ. Սերովբեանը, բացի սրանից, Ռուսաստանի զանազան ցուցահանդէսներում ստացել է թէ՛ նշանադրամներ և թէ գովասանական վկայականներ, իսկ պարսից շահից՝ Արծուի և Արեգակի շքանշանը։

—Երեւանեան թեմական դպրանոցի նախկին ուսուցիչ, Օդէսայի համալսարանի պատմագիտական ճիւղի կանդիդատ Պ. Նիկ. Տէր-Գէորգեանը, ներկայացրել է Թիֆլիսի Հրատարակչական ընկերութեանը «Միջին դարերի պատմութեան» դասագիրքը՝ թեմական դպրանոցների համար կազմած։ Պ. Տէր-Գէորգեանը օգտուել է նորագոյն հետազօտութիւններով և իր ձեռնարկը դեռ ձեռագիր մաս մաս փորձել է իր դասաւանդութեան ժամանակ։

—Բագւաբնակ Բէգլարեանները Պերմ քաղաքի գործարանում պատրաստել են տալիս եկող տարւայ նաւագնացութեան համար մի շոգենաւ 250,000 ռուբլու արժողութեամբ։

Բունիաթեան եղբայրները նոյնպէս պատուէր են տուել մի այլ շոգենաւ որ երթեւեկութիւն պիտի անէ Կասպից ծովի վրա Աստրախանից Բագու և Բագւից Աստրախան։ Այս շոգենաւը, որ ահագին արժողութիւն ունի, կը լինի ամենամեծը և ծանրը բոլոր այն շոգենաւներից, որոնք մինչեւ այսօր գոյութիւն ունեն Կասպիական ծովի վրայ։ (Տարազ)

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԵՐ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Երուսաղեմատան հիւրանոցի կիսաստուերին մէջ, իր պատկառոտ եկեղեցականի ու քաջառողջ ծերունիի դէմքով, Տ. Յարութիւն Պատրիարք կուգայ նորէն սփռել, առաջին վայրկեանէն, կենդանութիւն մը իր շուրջը և համակրանք՝ շատ հեռուները։ Երեկ իրիկուն, երբ ներս կը մտնէի այդ վանական սրահէն, իր գալուստն ողջունելու, չէի կրնար յուզումով խառն յիշատակներու վերանորոգումը զսպել մտքիս մէջ, 1889 մայիսի այն գեղածիծաղ առաւուն, երբ Ս. Յակոբեանց վանքին մէջ հրաժեշտ ու օրհնութիւն կ'առնէինք իրմէ։ Պատգամաւորներուն մեկնումը մանաւանդ՝ կը փակէր Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ իր գնահատելի պաշտօնավարութեան թուականն, և հանրային կեանքի նոր շրջան մը կը բանար իրեն համար, Երուսաղեմի պատրիարքութիւնը։ Պաշտօնին բարձրութիւնն ըմբռնած ու իր անձնուիրութեանը վրայ վստահ, Վեհապետեան Սրբազան հզօր կերպով ձեռք կ'առնէր այդ հոյակապ ուխտատեղւոյն և անոր վանքերուն ու թեմերուն ղեկը։ Պատմական օր մըն էր իրեն համար այդ օրը, որուն նախընթաց շաբաթներն անցած էին պաշտօնական ընդունելութիւններով ու կրօնային հանդէսներով․ և երբ մենք կը հեռանայինք Սիոնի պարսպադռնէն դէպ ի Յոպպէ իջնելու, ինքը կ'ելլէր իր պատրիարքական դահլիճն, աներեւակայելի աշխոյժով մը աշխատութեան սկսելու։

Պզտիկ ու աժմկալի աշխատութիւններէ այնքան շուտ յոգնող երիտասարդներս՝ կրնա՞նք գաղափար կազմել այն հոգեկան կորովին ու մտաւորական բարձրութեան վրայ որուն պէտք ունի ալեզարդ եկեղեցական մը, այդ ծանրաբեռն պաշտօնը տանելու համար, առանց դուլ ու դադար առնելու, առանց բնաւ տկարանալու։ Եւ Տ. Յարութիւն Պատրիարք այս կարողութիւնները կը միացնէ անհուն գորով մը, հայրական գուրգուրանք մը՝ իր պատրիարքութեան ու իր միաբանութեան վրայ։ Այս չորս տարիներու ընթացքն, այնքան բեղմնաւոր գործերով լեցուն և այնքան տաղտկալի հարցերով խառն, վերջապէս ծովի և օդի պէտքը զգացուցած են, նոր ոյժ տալու համար մտքին ու մարմնոյն, և ահա Էլ-Գուտ՝ Եաֆայի փոթորկայոյզ եզերքէն կուգայ կը հասնի Վոսփորի մեղմածուփ նաւահանգիստը, բերելով Պոլսոյ նախորդ Պատրիարքը՝ Վեհապետեան Սրբազան այն եզականապէս յարգելի անձնաւորութիւնն է, որ միշտ բարձր կը մնայ մեր եկեղեցականութեան մէջ և կը կենդանացունէ հին Պատրիարքներու պատմական մեծ դէմքերը։ Իր խօսակցութիւնը, այնքան բեղմնաւոր ու այնքան իմաստուն, կրնայ հաւասար հաճոյքով լսուիլ պաշտօնական շրջանակներու ու նրբամտութիւն փնտռող ընկերական դասերուն մէջ միանգամայն։ Առաջին բառերէն կը թափանցես իսկոյն թէ որքա՛ն սրամտութեամբ հետեւեր է այն եկեղեցական ու հանրային գործերուն որք կը կատարուին իր թողած աթոռին շուրջը․ և իր բարենախանձ ոգին կը մղէ զինքը, անցողակի, գնահատում մը կամ դատողութիւն մը ընելու․ կ'զմայլես թէ փորձ միտք մը ու անկեղծ զգացում մը կը ներշնչէ այդ արտայայտութիւններուն, և մեծարանքդ կը փոխուի հիացումի։

Անցած դացած, ու մոռցուելու վրայ եղող մեռեալներուն վրայ խորապէս զգածուած արդէն, նոր ցաւ մը եղեր է իրեն համար, իմանալով այստեղ Կիւմիւշկէրտան Տիգրան Էֆէնտիին մահը։ Այն գովեստը, զոր քանի մը բառերով Տ. Յարութիւն Պատրիարք տուաւ այդ բարեյիշատակ անձին համար, շատ մը դրուատիքներէ ազդու կը թուէին. վիշտ մը կը նկարուէր դէմքին վրայ ու ցաւագին շեշտով մը կը յարէր․ «Խեղճը յանձն առած էր իր ծախքով կառուցանել Հիւանդանոցի մատուռը․ հիմայ ո՞վ պիտի շինէ այդ եկեղեցին»։

Իսկ երբ կը խօսի Երուսաղեմի վրայ, ձայնը նոր ուժ մը կը ստանայ կարծես ու դէմքը կենդանութիւն մը․ ինքը հոս է, բայց սիրտը հոն․ կը հաւատանք ասոր։

Մարմնապէս տկար չէ Տ. Յարութիւն Պատրիարք․ մտքի յարատեւ աշխատութեամբ միայն յոգնած, և կազդուրման ու հանգստեան կարօտ․ բայց անխառն հանգիստ ու կատարեալ անգործութիւն իրեն համար չեն․ Երուսաղեմատունէն կը վարէ ու պիտի վարէ Երուսաղեմի աթոռը, հսկելով պատրիարքութեան գործերուն վրայ, հոգալով վանքերը, ուխտատեղիները, տեղեկանալով ամեն բանի ու տնօրինելով ամեն բան։

Իր գալուստը օրուան կարեւորագոյն դէպքն է ազգ. շրջանակի մէջ և անկեղծ ուրախութեամբ կ'ողջունուի․ Երուսաղեմի Ս. Պատրիարքը իր հետ կը բերէ խնկաբոյր ու թարմ յիշատակն նուիրական վայրերուն ուսկից կուգայ, հայրական օրհնաբեր շունչ մը որ սփոփիչ բան մը ունի իր մէջ և Գողգոթայի տաճարէն կը բերէ խաչին վեհութիւնը ու օրհնութիւնը կենդանի կերպով։

Տ. Ա.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՏԻՐԱՄՕՐ ԾՆՈՒՆԴԸ

Որովհետեւ շատ խօսուած ու միշտ գովասանուած Տիրամօր ծնողաց, այսինքն Յովակիմայ և Աննայի տօնն է այսօր, ուստի կ'արժէ քիչ մը ծանօթութիւն տալ նոցա վրայօք եւս մեր բարեպաշտ ժողովրդեան․ Յովակիմ կը սերէր ուղղակի Դաւիթ Մարգարէի ցեղէն, այլ սակայն ոչ թէ Սողոմոնի գծէն, այլ Դաւիթի Նաթան որդիէն։ Յովակիմ յետ Դաւիթի 38րդ նահապետն էր Յուդայեան տոհմին, ուրկէ ըստ մարգարէութեանց, պիտի ծնէր Մեսիան Յիսուս։ Յովակիմայ պապն էր Ղեւի, որ ծնաւ երկու որդի, Մելքի և Պանթէռ անուններով։ Մելքիէն ծնաւ Հեղի, որոյ որդեգրեցաւ Յակովբ, հայր Յովսէփայ, նշանածին Մարիամու։ Իսկ Պանթէռէն ծնաւ Յովակիմ, որ ամուսնացաւ Աննայի հետ, որ Ղեւեայ ցեղէն էր և դուստր Մատթան քահանայի։

Թէեւ արգիլուած էր Հրեայներուն չ'առնուլ ուրիշ ցեղէ կին, այլ Ղեւեայ ցեղն, որովհետեւ ունէր ցիր ու ցան բնակութիւն, այս կանոնէն դուրս էր, օրինակի համար Ահարոն Նասոնի աղջիկն առած էր կին, որ Յուդայի ցեղէն էր։

Աննայի քոյրերն էին Մարիամ, որմէ ծնաւ Սողոմէ, դայեակ Քրիստոսի․ միւս քոյրն էր Սաւլի, որմէ ծնաւ Եղիսաբէթ, մայր Յովհաննէս Մկրտչի։ Այս սուրբ գերդաստանէն պիտի կազմուէր յետոյ Մարիամով և Յիսուսով՝ փոքրիկ, այլ «Սուրբ ընտանիքը»։

Յովակիմ և Աննա անզաւակ էին, տարուէ տարի կ'երթային Երուսաղէմ ուխտի, պաղատելով առ Աստուած, որ զաւակ մը շնորհէ իրենց․ Նոցա սրբոտի կսկիծն ա՛լ աւելի սաստիկ եղաւ, երբ ամլութեան օրինական ժամանակը համնելէն յետոյ, պիտի զոհէին տաճարին մէջ, արգիլուեցաւ Յովակիմ նախապատիւ լինելէ, վասն զի իր տոհմին մէջ ամուլ մնացած էր, և ըստ օրէնի այլ եւս չէր նահապետ կամ գլուխ Դաւիթի ցեղին։ Առ վշտին՝ Յովակիմ կինը թողլով կը փախչի յանապատ, ուր քառասուն օր ու գիշեր անդադար կ'աղօթէ, որ Աստուած բառնայ ամլութեան նախատինքն իրմէն ու իր կնիկէն։ Կ'աւանդուի թէ երբ Յովակիմ կը մրափէր, աղաւնի մը թռչտելով կը բերէ, վարդ մը կը դնէ Յովակիմայ սրտին վրայ․ Նոյնը և Աննայի կը պատահի յԵրուսաղէմ։ Որովհետեւ կար աւանդութիւն թէ Դաւիթի ցեղէն եղող կնկան մը սրտին վրայ աղաւնիէ մը ձգուած վարդ տեսնուիլ, այն կնիկէն պիտի ծնի այն կոյսը, որ մայր պիտի ըլլայ Մեսիայի․ ուստի Յովակիմ և Աննա իսկոյն ուրախութեամբ հասկցան թէ իրենցմէ պիտի ծնի սպասուած կոյսը։ Ի սկզբան քահանայապետք չհաւատացին, այլ սակայն այս նորահրաշ ծնունդը երբ տեսան, զարմացան և անդէն փութացին առ Յովակիմ, ոչ թէ միայն խնդակցելու, այլև համբուրելու համար այն աղջիկ երախայն որ ըստ մարգարէութեանց թէ «կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ», պիտի ըլլար իսկապէս տիրամայր դշխոյ։

Յովակիմ և Աննա իրենց այս աղջիկը անուանեցին Մարիամ, որ երբ եղաւ եռամեայ, տարուեցաւ տաճարը, որ հոն մնայ, զարգանայ շնորհօքն Աստուծոյ, կրթուի և պատրաստուի մայրութեան Մեսիայի․ Այլ երբ 14 տարու կ'ըլլայ Մարիամ և յղութեան նշան ցոյց չտար, քահանայապետն ու իր ժողով տրամութեամբ կ'որոշէին Մարիամը նշանել Յովսէփայ, որ ըստ հրէական օրէնի, երբ ամենէն մօտիկ ազգական՝ Մարիամի ոչ թէ միայն տէր ու պաշտպան ըլլալու իրաւունքն ունէր, քանի որ մեռած էին Յովակիմ և Աննա, այլեւ նմա հետ ամուսնանալու։

ՆԱՀԱՊԵՏ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ի ԳԱՒԱՌՍ (*)

Ցաւալին այն է որ, շատ մը գիւղեր ալ այսպիսի քաղաքներու հետեւելով՝ ֆրանսերէնը կը նախադասեն իրենց համար առաւել կենսական ուրիշ ուսանելիներու։ Ասոնք ալ պարծանք մը կը համարին իրենց տղոց մի քանի Ֆրանսերէն բառեր թոթովել տալն, ու կը մոռնան թէ իրենք աւելի պէտք ունին հաշուեգիտութեան, երկրագործական գիտելեաց ևն։ Եթէ, որպէս չեմք կարծեր, գիւղացի ուսանող ընդարձակ ժամանակ ունի դպրոցին մէջ անցընելու՝ լաւ չէ՞ զայն զբաղեցնել գիւղատնտեսական հարցերով։ Միթէ այս կարեւոր ճիւղն՝ մեր մէջ՝ թողունք կատարեալ ուղղութեան՝ գէթ առ այն ժամանելու նպատակաւ սկզբնաւորութեան առաջին քայլն առա՞ծ է։ Միթէ մեր գիւղացին թո՞ղած է աւանդական նախապաշարումներն, միթէ մեր գիւղացին ու քաղաքացին կրցա՞ծ են ըմբռնել կենաց պայմանները, և ըստ այնմ ապրիլ։ Այս ամէն հարցմանց համարձակապէս կը պատասխանենք․ Ո՛չ։ Ուրեմն չարժէ՞ր որ՝ ամէն բանէ յառաջ՝ այս կէտերուն նուիրուի ուշադրութիւն։ Կը գանգատուին թէ գիւղացիներէն շատերը պարտք ունին, թէ հետեւաբար կը դիմեն պանդխտութեան, որ կը մաշէ, կը քայքայէ իրենց կեանքն ու հօրենական տնակը։ Սակայն ի՞նչ է պատճառը։ Ո՞չ ապաքէն անգիտութիւնը կենաց պայմաններուն և տնտեսական այն յոռի շրջանն յորում շրջանակուած են նահապետական դարերէ ի վեր, և ուրկէ նախապաշարօրէն չեն ուզեր դուրս ելնել։ Կրթական մարմինը գաւառացի ուսանողին մեծագոյն բարիքն ըրած չլինի՞ր, երբ մայրենի ու պետական լեզուներն ուսուցանէ ու բարոյականի գեղեցիկ հրահանգներ տալէ վերջ՝ սովրեցնէ անոր շահագործել իր ընտանեկան արտերն, այգիները, պարտէզներն, կենդանիներն․ ուսուցանէ անոր շերամաբուծութիւն և այս կարգի շահաւէտ դիւրին ու առտնին արհեստներ, որք կրնան գիւղական կեանքին ճակատագիրը բարեփոխել, և դանդաղ բազուկներու, անհոգ բնաւորութեանց ներշնչել ժրութիւն ու հնարագիտական փոյթ։ Թողունք այս գրեթէ նիւթական կէտերն, ու համառօտ տեսութիւն մ'ալ ընենք գաւառային վարժարանաց բարոյականի մասին, զի ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ․ զի նիւթական հաստատուն կազմակերպութիւնը կախումն ունի բարոյականէն, զի մարդիկ քանի որ ընկերութեան մէջ կ'ապրին, ունին բազմադիմի բարոյական պէտքեր ու պարտքեր։

Որովհետեւ գաւառներու մէջ ընտանեկան կրթութիւն՝ գէթ առ այժմ սպասելն աւելորդ է, որովհետեւ գաւառացի ուսանողին ապրած միջավայրին սովորոյթներն ու բարքերը յեղաշրջման կը կարօտին, պէտք է որ՝ դպրոցին մէջ՝ ուսումնական ու գիտական ճիւղերը մշակելէ աւելի հոգ տարուի մանկան բարոյական կրթութեան։ Բայց դժբաղդաբար, այս կենսական մասն ալ գրեթէ իր բացակայութեամբ կը փայլի մեր գաւառային նախակրթարանաց մէջ։ Ուսանողն՝ ինչ տգեղ նկարագրով որ կը մտնէ վարժարանի սեմէն ներս, միեւնոյն կրթական թերութեամբ դուրս կ'ելնէ անտի։ Մինչդեռ գաւառացի երկիւղած, հեզ, ուշիմ և ամէն տեսակ կրթութեան ընդունակ հայ մանուկն անհնարին և դժուարին իսկ չէ՝ բարեկրթութեամբ, ընտիր բարոյականաւ օժտել, դաստիարակութեան առողջարար պատկերը խառնելով անոր հոգեկան ու իմացական կարողութեանց և սրտի տրամադրութեանց ու բնական յօժարութեանց հետ։ Մեր գաւառային կրթարանաց մէջ միշտ բացակայ է դասերէն ամենէն պիտանին, բարոյախօսութիւնը։ Ահա թէ ի՞նչ է պատճառն, որ մեր տղայք՝ երբ քիչ թէ շատ մտաւորական պաշարով շրջանաւարտ կը լինին՝ յաճախ կանգիտանան քաղաքավարական ձեւերն ու շարժումներ, կանոնաւոր խօսակցութիւն, պատշաճութեան յարգում ևն. ևն. և այսպիսեաւ չեն կրնար ընկերականութեան մէջ գրաւել կարեւոր դիրք, չեն կրնար վարել՝ յուսացուածին պէս իրենց յանձնուած գործերն, ու այսպիսեաց ի տես, տակաւ առ տակաւ կը շիջանի ժողովրդեան մէջ եռանդն կրթութեան և ուսման։ Ժամ է որ ազգ. կրթական մարմիններն ուշադրութիւն դարձնեն այս կարեւոր կէտերու վրայ, և միջոցներ ձեռք առնուն անցելոյն մէջ գործուած այս կարգի սխալները չը կրկնելու ներկային մէջ։ Կարգն եկաւ հոս կրկնելու՝ թէ և այս թերութեանց նկատմամբ լուռ և անտարբեր մնացած չէ ազգ. մամուլն, թէև շատ անգամներ կեդրոնական ու գաւառական Ուսումն. Խորհուրդք և գրագէտ դաստիարակներ յուզած են այս խնդիրներ և բանաւոր դարմանն առաջարկած, սակայն որովհետեւ՝ ցաւալի է ըսել թէ, դեռ միեւնոյն թերութիւնները կը գործուին մեր վարժարանաց մէջ՝ ըստ մեր խոնարհ կարծեաց աւելորդ չէր անգամ մ'եւս այս ճշմարտութեանց վրայ հրաւիրել ուշադրութիւնը նոցա՝ որք կոչուած են ազգին ապագայ սերնդեան կրթական բաղդը տնօրինելու։

Ց. Պ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Խարբերդ

(*) Շարունակութիւն երէկի թիւէն եւ վերջ։

Վառի անուն

Աղքատ պառաւ կին մը կը բնակէր Պալթիմոր-Օհայոյ երկաթուղւոյ գծին վրայ որ կ'անցնէր վայրի և անմարդաբնակ գաւառէ մը յԱրեւմտեան Վիրճինիա։ Պառաւը այրի էր, և ունէր միայն մէկ դուստր որ իր հետ կը բնակէր կոճղերէ շինուած խրճիթի մը մէջ, մօտ խոր կիրճի մը որոյ վրայ ձգուած էր երկաթուղւոյն կամուրջը։

Պառաւը հոս իր ապրուստը կը հայթայթէր հաւ սնուցանելով և հաւկիթ ծախելով, նաեւ իրենց եղանակին մէջ հատապտուղներ և ուրիշ մանր բաներ վաճառանոց տանելով։ Ստիպեալ էր բազում մղոններ քալել երկար և ձանձրալի ճամբէ մը դէպ ի քաղաք, հոն ծախելու համար իր կողովին մէջ գետեղած բաները։ Դէպ ի քաղաք գացող երկաթուղին կ'անցնէր անոր խրճիթին քովէն, բայց ա՛յնքան չնչին էր կնոջ ըրած շահը որ ստակ չէր ունենար երկաթուղւոյն անցագինը վճարելու․ ուստի ընդհանրապէս հետիոտն կ'երթար վաճառանոց։

Հուսկ յետոյ երկաթուղւոյ տոմսակ հարցնող պաշտօնեան տեսաւ զնա որ կը քալէր երկաթուղւոյ գծին քովէն կամ երկաթուղւոյ գիծերուն մէջտեղ գտնուող հետիոտն երթալու ճամբուն վրայէն, և բարեբարոյ մարդ մը լինելով՝ յաճախ թոյլ կուտար նմա շոգեկառք հեծնել առանց դրամ վճարելու։ Նոյն մարդասիրութիւնը կը ցուցնէին ծերունին կնոջ՝ նաեւ շոգեկառաց մեքենավարը և կասեցուցիչը, և կը զգային թէ չէին անիրաւեր երկաթուղւոյ ընկերութեան շահուց՝ պառաւէն շոգեկառքի անցագին չառնելով։ Եւ ահա շատ չանցաւ պատահեցաւ արկած մը որ ցուցուց թէ իրաւունք և արդարութիւն էր ինչ որ անոնք ըրած էին։

Մարտ ամսուն մէջ անձրեւը կ'իջնէր, և լեռներէն վար կը խուժէին հալած ձեան և սառի գլորող գոռացող հոսանքները դէպ ի պառաւին տան մօտ գտնուող կիրճը։ Գիշերուան մութը կոխելուն հետ բարձրացաւ ջուրց հեղեղը, մինչեւ որ կինը լսեց երկաթուղւոյ կամուրջին ճայթիւնը, վասն զի իր յենարաններուն վրայէն խախտելով վար ինկած էր և իր ատաղձները գահաւանդին քարաժայռոտ կողերուն զարնըւած և կտոր կտոր ջախջախուած էին։

Գիշերը կէս գիշեր էր։ Անձրեւը կ'իջնէր տեղատարափ, և թանձր ու ահաւոր մթութիւնը կը տիրէր։ Կէս ժամ յետոյ կառախումբը հոն պիտի հասնէր։ Գծին վրայ չկար հեռագիր, և կայանք իրարմէ շատ հեռի կը գտնուէին։ Պառաւն ի՞նչպէս կրնար կառախումբին իմացունել մօտալուտ ահաւոր արկածը։ Իր բնակարանին մէջ հազիւ ունէր ճրագէ մոմ մը, և չէր կրնար ճրագով կամ ձեթով, եթէ ունենար իսկ, վառել լոյս մը որ մէկ վայրկեան տոկար հովի և անձրեւի այդ փոթորկին մէջ։

Վայրկեան մը պէտք չէր որ կորսուէր, և կնոջ միտքը վայրկենի արագութեամբ կը գործէր։ Նա կտրեց իր միակ մահճակալին չուանները, շալկեց անոր մերկ ցիցերը ու վրայի և քովի ձողերը։ Իր դուստրն ալ հետեւեցաւ իրեն՝ առնելով իր երկու փայտէ աթոռները։ Զառ ի վեր հողակոյտին վրայ ելան մագլցի, հոն դիզեցին բոլոր իրենց տնական կահ կարասին երկաթուղւոյ գծին վրայ՝ միայն քանի մը ձողաչափ հեռի խորտակեալ կամուրջին ահեղի վայրէն որ կը խոխոջէր գոռացող հեղեղին յարուցած կարկաջաստահանքէն։ Կառախումբին բռմբիւնը և շառաչիւնը հասաւ հեռուանց անոնց ականջին, ճիշդ երբ նոքա վառած էին իրենց տան այն լաւ մը չորցած կարասինները։ Խարոյկը՝ կը բոցավառէր գիշերը, արձակելով իր կարմիր և փողփողուն լոյսը երկաթուղւոյ գծին երկայնութեամբը։ Տասնեհինգ վայրկենէն պիտի սկսէր մարիլ․ բայց պառաւը կարող պիտի չըլլար վերստին բոցավառել զայն կանաչ թաց փայտով։

Կառախումբին որոտումը բարձրացաւ։ Կրակէն հինգ մղոն միայն հեռի կը գտնուէր։ Ժամանակին պիտի տեսնէի՞ն արդեօք զայն։ Պառաւը պատռեց հանեց կռնակէն իր բրդեղէն կարմիր շրջազգեստը և կապելով զայն ձողի մը ծայրը, վազեց գծին վրայ ելաւ և վառելով զայն, կը ճօճէր իր երկու ձեռուըներով, մինչ դուստրը քիչ մը աւելի իր գլխուն շուրջը կը դարձունէր աթոռի բոցավառ ձող մը։

Մօտալուտ վտանգին անգէտ՝ հարիւր ուղեւորաց կեանքերը կախուած էին յաջորդ վայրկենի ելքէն։ Գետինը կը դողար ծերունի կնոջ ոտքին ներքեւ։ Շոգեգործեան խոշոր կարմիր աչքը երեւցաւ, կուգար կը մօտենար կորագծի մը վրայէն։ Կառախումբը մեծագոյն արագութեամբ կը սլանար․ բայց կասեցուցիչ պաշտօնեայն իր բոլոր զօրութեամբը կը ջանար կը ճգնէր կեցունել անուոց ընթացքը․ անիւներուն թաւալումը հետզհետէ յամրացաւ, և ի վերջոյ կեցան ճարճատող կրակին քով, որ տակաւին բաւական լոյս կ'արձակէր և կը ցուցնէր խորտաբորտ եզրները սեւ անդունդին ուր, եթէ պառաւին նշանը չըլլար, պիտի գլորէր կառախումբը բոլոր ուղեւորներովը հանդերձ, և պիտի բերէր այնպիսի ահաւոր և սոսկալի մահ եւ կորուստ, որոյ վրայ մտածելն իսկ սարսափ կ'ազդէ մարդուս։

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ
ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Դրամագլուխ՝ 10,000,000 անգլ. ոսկի

Կեդրոնատեղի Ղալաթիա
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Ի ՊՈԼԻՍ
Համիտիյէ փողոց, Թոմրուք խան
ԴՐԱՄԵՆԵԱԿ Ի ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՑ, ԹԻՒ 190

ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ
Ի ԼՈՆՏՈՆ ԵՒ Ի ՓԱՐԻԶ

Մասնաճիւղեր

Ատալիա
Ատանա
Այտըն
Հալէպ
Աղեքսանդրիա
Ադր.պոլիս
Էնկիւրի
Պաղտատ
Պէյրութ
Պրուսա
Դամասկոս
Գոնեա
Լառնաքա
Դանիրէ
Լիմասօլ
Մերսին
Նազիլլի
Նիքոսիա
Ուշաք
Փիլիպէ
Բոր-Սաիտ
Ռուսճուք
Սելանիկ
Սամսոն
Իզմիր
Սոֆիա
Տրապիզոն

Պարտամուրհակներու եւ արժէթուղթերու յանձնման փոխարէն ստակ փոխ կը տրուի որոշ պայմանաժամով կամ ընթացիկ հաշուով։

Դրամազեղչ արժէթուղթերու։

Հանում փոխանակագրերու, չէքերու, վարկաթուղթերու եւ հեռագրական հրամանագրերու Թուրքիոյ եւ արտասահմանի գլխաւոր քաղաքներուն վրայ։

Բացում ընթացիկ հաշիւներու, պահպանում արժէթուղթերու եւ արժէքաւոր նիւթերու։

Գանձում կտրօններու, արժէթուղթերու՝ Թուրքիոյ եւ արտասահմանի վրայ։ Վաճառում եւ գնում դրամներու։

Օսմ. կայս. Պանքան կ'ընդունի դրամական աւանդներ որոշ պայմանաժամով եւ հետեւեալ հաստատ տոկոսի սակերով.

Տարին 2½ % մէկ տարուան պայմանաժամու աւանդի համար.

Տարին 1½ % վեց ամսուան պայմանաժամով աւանդի համար.

Տարին 1 % երեք ամսուան պայմանաժամով աւանդի համար։

ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ կը ստանձնէ բոլոր վերոյիշեալ գործողութիւնները եւ բաց ստոր փոխատուութիւններ կ'ընէ ապրանքներու վրայ եւ ապրանքներ կ'ընդունի իբր աւանդ։

Բերայի գրասենեակն ալ կը կատարէ Պանքայի բոլոր այս գործողութիւնները բաց ի ապրանքներէն։ Ասկից զատ, օրուան գինովը կը ծախէ եւ կը գնէ՝ անմիջական յանձնումով, վճարահանութեան զանազան թուղթեր, ինչպէս, Փարիզ քաղաքին պարտատոմսեր, օսմանեան պարտամուրհակներ, Յելլենական պարտամուրհակներ, Պանամայի պարտամուրհակներ, եւ այլն եւ այլն։

ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ եւ ԲԵՐԱՅԻ ԴՐԱՄԵՆԵԱԿԸ կը ծախեն նաեւ օսմ. պարտամուրհակներու բրոմէսներ, եւ արժէթուղթեր կ'ընդունին, ընթացիկ հաշուով, մինչեւ 50 օսմ. ոսկի տարին % տոկոսով։

ԽՆԴԻՐ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Ստորեւ կը հրատարակենք բնալուծական տեղեկագիր մը զոր խմբագրած են կառավարական նշանաւոր քիմիագէտ Պ. Փէթրօ Ափէրի և Ցուրիխի համալսարանին արհեստական քիմիագէտ և բնական գիտութեանց վարդապետ Պ. Կ. Սինկրօս՝ մայրաքաղաքիս մէջ սպառուող տեղական կամ օտար երկիրներէն եկող գոնեաքներուն անխարդախ բաղադրութեան, ընտիր տեսակին և հանրային առողջութեան օգտակարութեան մասին։ Այս երկու նշանաւոր քիմիագիտաց կողմէ խմբագրեալ պաշտօնական տեղեկագրէն ամեն ոք կրնայ լիապէս համոզուիլ թէ մայրաքաղաքիս մէջ սպառեալ գոնեաքներուն մէջէն ո՛րը նախապատուելի և առողջապահութեան տեսակէտով օգտակար համարուելու արժանի է։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիւ 3146

Կ. ՊՈԼԻՍ. 4 Օգոստ. 1893

Մեզ յանձնուած ըլլալով քննել Ս. Ի. և Ե. Մէթաքսասի ի Պիրէոն պատրաստեալ գոնեաքին բաղադրութիւնն և եթէ Յունաստանէն եկող միւս գոնեաքներէն առաւելութիւն մը ունենալով նախապատիւ համարուելու արժանի է, նոյնպէս եթէ պատրաստեալ է զուտ գինիէ և նման այն օրինակին զոր երկու տարի յառաջ քննած էին, ձեռնարկեցինք անոր քննութեան որոյ արդիւնքն ստորեւ պիտի տեղեկագրենք։ Ըստ որում խնդիրն հանրային առողջութեան տեսակէտով բարձր նշանակութեան արժանի է, պարտ էր մեզ այլ և այլ խանութներէն մէկ մէկ օրինակ առնուլ որպէս զի լիովին ապահով ըլլանք սպառեալ գոնեաքին որակին վրայ, և ըստ որում խնդիրն իւր մէջ կը պարունակէ բազում դժուարութիւններ, այս մասին արհեստական քիմիագէտ Պ. Կ. Սինկրօսի աջակցութիւնն ևս խնդրեցին։

Այսու պատճառաւ տասն և չորս (14) կեդրոնական վաճառատուններու դիմեցինք որոց իւրաքանչիւրին մէկ մէկ շիշ օրինակներ ստացանք թէ՛ սնտուկներու մէջէ և թէ՛ իբր նմուշ գրուած շիշերէ։

Մեր դիմած տասն և վեց վաճառատուններն են.

Ի Բէրա. Պ. Լալայի «Հէլվէտական» վաճառանոցը, Պ. Գաքավօփուլօսին «Վիէննական» վաճառ․ Նպարավաճառ Պ. Ցիօնկային, Փափա Եօրկիին «կեդրոնական նպարավաճառանոց, և Տիամանտօբուլօ եղբարց նպարավաճառանոցը։

Ի Ղալաթիա. Պ. Տ. Գրիստալիի նպարավաճառանոցը, Պ. Սաքելլարիօսի «Օրէ՛ա Էլլա՛ս» նպարավաճ․ Պ. Տ. Նօմիգօսի շաքարավաճառանոցը և Պ. Տէսիլայի նպարավաճառանոցը։

Ի Պոլիս. Քէլլէնճի օղլուի վաճառատունը, Պ. Անաղնօստօփուլօսի վաճառանոցը և Փանթազօփուլօսի վաճառանոցը։

Մեր հետազօտութիւնքն առաւել գործնական ընելու բաղձանօք, բաղդատելու համար այլ և այլ ուրիշ գոնեաքներ եւս ստացանք թէ՛ Յունաստանի և թէ Գաղղիոյ Պորտոյի երեւելի գործարաններէն։ Յետ երկար, բազմավաստակ, ինչպէս նաեւ քիմիական նուրբ վերլուծութիւններէ, հետեւեալ արդեանց յանգեցանք։

Պ. Մէթաքսասի տասն և չորս օրինակներուն բնական և արուեստական յատկութիւնքը քննելէ յետոյ, որոշեցինք գինւոյ, ցքիի, ջուրի և այլոց քանակութիւնը, եւ բաղդատեցինք մեր արտադրած արդիւնքը դարձեալ մեր կողմէ քննուած այլ գործարաններու գոնեաքներուն հետ։ Յետոյ լուծեալ ցքիին բնական յատկութեան և օտար տարրերներ պարունակելուն կամ չպարունակելու մասին ճշգրիտ քննութեան զբաղեցանք։ Առ այս հետեւեցանք այն միջոցներուն և եղանակներուն զորս կը ցուցնեն մեզ E. Adam, Jorissen, Cazeneuve, Coton et Barbet, Portes et Ruyssen, Cabasse, Chateau, Charles, Hébert, Viederholt ևայլն եղանակներ զորս քաղեցինք հետեւեալ հեղինակութիւններէ Baudrimont (Dictionnaire des alterations et falsifications 1882), G. Salet (Agenda du chimiste 1887), Barillot (Manuel de l'analyse des vins 1889), Ch. Steiner (Traité des eaux de vie 1890), Magnier de la Source (Analyse des vins 1893), Hépert (Examen des boissons falsifiées Juin 1893), Van Hamel Roos (Revue internationale des falsifications 1889-1893).

Մենք ի կիր առեալ ամեն փորձերէն և մանրամասն ու ճշգրիտ քննութիւններէ կը հետեւի որ մեր մայրաքաղաքին մէջ վաճառեալ ՄԷԹԱՔՍԱՍ ԵՂԲԱՐՑ գոնեաքը զուտ և անապակ գինիէն պատրաստեալ լինելով՝ ամենայն օտար և արհեստական նիւթերէ ազատ ու զերծ է (այսինքն եգիպտացորենէ, գետնախնձորներէ, բանջարներէ և այլոցմէ), նաև հաստատելով մեր հաւաստիքն թէ իւր տեսակին մէջ գերազանց յատկութիւն ունենալով կարող է բաղդատուիլ գաղղիական գոնեաքներուն ամենէն երեւելիներուն հետ, հետեւաբար պարտ անձին կը համարինք մասնաւոր եղանակաւ յանձնարարել յիշեալ գոնեաքը մեր հասարակութեան երբ ուզէ գործածել այսօրինակ ըմպելի մը։

Կ. ՍԻՆԿՐՕՍ.
Վարդապետ բնական գիտութեանց
եւ արհեստական քիմիագէտ՝ վկայ-
եալ Ցուրիխի համալսարանէն։

ՓԷԹՐՕՍ ԱՓԷՐԻՍ
Քաղաքապետական քիմիագէտ,
գերմանական, Աւստրիական,
Հելլենական եւ այլ հիւպատոսարաններու։

769

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ ԱՄԻՐԱՆԱՅԵԱՆ
ԳԱՏԸԳԻՒՂ ՊԱՀԱՐԻՅԷ ՓՈՂՈՑ ԹԻՒ 5
Բացումն սեպտեմբեր 1

Մանկապարտէզս, ուր կ'ընդունուին 3էն 9 տարեկան երկսեռ մանուկներ, հաստատուած է, Ֆրէօպէլեան հրահանգաց համաձայն, բարձրադիր վայրի մը մէջ, հաստատուն շինուածով լուսաշատ և օդաւէտ սենեակներով։ Հաստատութիւնս, երեք դասարաններու բաժնուած ծրագրով մը, կը խոստանայ տալ ազգային մատղ մանկտւոյն, կարող մանկավարժուհեաց ձեռամբ, ֆիզիքական, բարոյական եւ մտաւորական խնամեալ դաստիարակութիւն մը եւ պատրաստել զանոնք ըլլալու ԽՈՀՈՂ եւ ԱՇԽԱՏՈՂ էակներ։

Բաց ի Ֆրէօպէլեան նուէրներէն, մանկապարտէզս ունի դաշնակ մ'ալ որով սանիկները պիտի երգեն, պարեն եւ կատարեն իրենց մարմնամարզական բոլոր խաղերը։ Բաւական ընդարձակ պարտէզի մը մէջ իւրաքանչիւր սանիկ պիտի ունենայ նաեւ իր մասնաւոր փոքրիկ ածուն ուր պիտի վարժի իր ձեռամբ մշակել եւ հասցնել եղանակին յարմար ծաղիկ եւ բանջարեղէն, ըստ Ֆրէօպէլեան հրահանգաց։

Առաջին տարիէն սկսեալ սանիկները մայրենի լեզուի հետ պիտի վարժին գաղղիերէն խօսակցութեան։

Մանկավարժուհի Օրդ. Տիկին Մատաքեանց կը նուիրէ վեհանձնաբար իւր աջակցութիւնը մանկապարտէզիս կազմակերպութեան եւ ուղղութեան մասին։

ՄԱՆՐԱՄԱՍՆ, ՉՈՒԱՐՔ ԿԵԱՆՔ, ՄԱՅՐԵՆԻ ԽՆԱՄՔ։ ընդունելութեան պայմաններու եւ ծրագրի մանրամասնութեանց համար Պատ. ծնողը կրնան անսակցիլ մանկապարտէզիս մէջ, ամեն օր, ժամը 7—10, ըստ Թրքաց։

Տնօրէնուհի
ԿԱՐԾԻՆԷ ԱՄԻՐԱՆԱՅ

Հիմնադիր-Տնօրէն
ՄԻՀՐԱՆ ԱՄԻՐԱՆԱՅ

755 3—10

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ
[illegible]

Կրթական հաստատութեանս՝ ուր կ'աւանդին նախնական եւ երկրորդական ուսմունք եւ գիտութիւն, վերաբացումն նոր տարեշրջանիս կ'ըլլայ ամսոյս 30ին երկուշաբթի օրէն, եւ դասախօսութիւնք ճիշդ չորեքշաբթի, սեպտեմբեր 1էն։

Աշակերտութեան ծնողք կամ պաշտպանք նախ պարտին ներկայանալ Տնօրէնութեանս անմիջապէս կամ փոխանորդով, ի խորհրդակցութիւն փոխադարձ պարտաւորութեանց եւ պաշտպանելու իրենց պալակներն կամ պաշտպանեալներն դպրոցական դասաւորութեանց։

Այն ծնողք՝ որք կը փափաքին ի նորոյ իրենց աղջկունքը գիշերօթիկ կամ ցերեկեայ յանձնել մեր խնամոց եւ դաստիարակութեան, կարող են դիմել ամեն առաւօտ ի վարժարանս մանրամասն տեղեկութեանց համար. իսկ գաւառներէ գալիք աշկերտաց ծնողք, եթէ անձամբ կարող չըլլան գալ, ցոյց տան իրենց փոխանորդներն՝ որոց կը հաղորդի պայմաններն ընդունելութեան աշակերտութեանց։

Հիմնադիր-Տնօրէն
Մ. Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Իւսկիւտար Իճատիյէ 754 3—6

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Ի ԳԱՏԸ ՔԷՕՅ

Կը բացուի վերստին Սեպտեմբեր 2/14ին, հինգշաբթի օրը։ Նոր շրջանիս կը սկսի նաեւ առաջին անգամ Գերմանական լեզուի դասախօսութիւնը՝ ըստ խնդրանաց շատերու, առանց սակայն պարտաւորիչ ըլլալու։

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

753 3—5

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՈԼԷՃ
ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՄԲ ՖՕՐ ԵՂԲԱՐՑ
Բէրա, [illegible], [illegible] փողոց Թիւ 2-4

Վերաբացումը տեղի պիտի ունենայ սեպտ. 8/20ին։

Քոլէճին յայտագիրը կը համապատասխանէ ֆրանսական համալսարանի յայտագրին։

Օտարազգի աշակերտներուն իրենց մայրենի լեզուին ուսուցումը դիւրացնելու եւ այսպէս համակերպելու համար բազմաթիւ ծնողներու փափագին, քոլէճը՝ դասերու կանոնական ժամերէն զատ, Թուրքերէնի, Յունարէնի եւ Հայերէնի դաս ալ հաստատուած է։

Այս դասեր ձրի են։ Աշակերտները պիտի կրնան կատարելապէս հետեւիլ այս դասերու իւրաքանչիւրին, ինչպէս կարելի է դատել անոնց յատկացուած ժամերէն։

Յունարէն, ամեն օր. — Թուրքերէն, շաբաթը չորս ժամ. — Հայերէն, շաբաթը երեք ժամ։

760 3—20

ՏՈՔԹՈՐ Ա. ՄՈՍԿՈՖԵԱՆ

Բժշկական ուսումը Փարիզի բժշկական համալսարանին մէջ աւարտելով Կ. Պոլիս վերադարձած եւ բնակութիւնը ի Կէտիկ-Փաշա համանուն պողոտային վրայ թիւ 81 տան մէջ հաստատած է։

Ամեն տեսակ հիւանդութիւն կը դարմանէ եւ միանգամայն վիրաբուժական գործողութիւններ կը կատարէ։

Իբրեւ մասնագէտ մանկաբարձութեան՝ կը խնամէ նաեւ կանանց ծննդական գործարանաց ախտերը ինչպէս նաեւ նորածին եւ փոքրիկ տղայոց հիւանդութիւնները։

Իրեն դիմող աղքատ հիւանդները ձրիաբար կը դարմանէ ժամը 7էն վերջը, երկուշաբթի օրերն էրիկմարդիկ՝ իսկ ուրբաթ օրերը կանայք։

Չորեքշաբթի եւ շաբաթ օրերը ժամը 8էն վերջը Սուլթան Մահմուտի դամբարանի դիմաց Համբիկ Էֆ. Էմիրզեանի դեղարանը իրեն դիմող հիւանդները կը դարմանէ։ 729 6—39

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՇՈԳ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բոլիվիա շոգենաւը, նաւապետ Լօյտ, Լիվրբուլէն ճամբայ կ'ելլէ գալ ամսոյ 18։

Ֆլամինեան շոգենաւը, նաւապետ Շերհըրտ, Լիվրբուլէն աստ հասաւ ընդհ. վաճառքով։

Ֆլամինեան լոգ. ընկ.
ԷՏ. ԼԱՖՈՆՏԷՆ

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսայի Շահանէ իչուն ալընաճագ միւթէնէվվի տաքըմներին միւնագասաէսի պազարլըգ ճարըսննըն թալիպ օլանլարըն պազար վէ չարշամպա կիւնլէրի Խազինէի ճելիլէի միւշարիլէյհայէ կէլմէլէրի իլան օլունուր։
21 աղուստոս 309

ՕՍՄ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱԼ ԸՍՏ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻՆ
1892 ՕԳՈՍՏՈՍ 2/14ԻՆ 20 ՍԷՖԷՐ 1310
Ապահովագրութիւնք ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ, ԿԵՆԱՑ ԵՒ ԱՅԼ ԱՄԵՆԱՅՆ ՎՆԱՍՈՒՑ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ, Կ. ՊՈԼԻՍ, ԵԷՆԻ ԽԱՆ, ՔԱՐԱՔԷՕՅ, ՂԱԼԱԹԻԱ

ՀՐԴԵՀԻ եւ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

322

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ էնտ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 11,141,290
ՀԱՍՈՅԹ 1891 ՏԱՐՒՈՅ 2,794,012

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 4,146,418
ՀԱՍՈՅԹ 1891 ՏԱՐՒՈՅ 1,099,000

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած բազմամեայ երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք յերկարացնել. Նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի վնասուց համար մինչեւ ցարդ տուած գումարնին 20,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՅՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 110,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջ ապրանքներն և գրաւածաթղթերն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք երթալու են դիմել Ղալաթիա Մէհմէտ Ալի փաշա խան գետնայարկ թիւ 22 և 22 bis սենեակներն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Ընդհանուր Ն. Պոլսոյ Գործակալ երեք Ընկերութեանց

ԻԼԱՆ ՊԱԶԱՐ ՍԷՐԱՄՊԷՐԻ

Թարապիասը Ղարպ Փէրգասը իչուն միւպաեա օլունաճագ 20,000 քիլէ պուղտայ վէ 360,000 գըրէ տաքիզ վէ 365,000 գըրէ տաքիզ վէ 360,000 գըրէ բիրինճ վէ 75,000 գըրէ Փասուլեա վէ օլ մըգտար նոխուտ վէ 48,000 գըրէ չէքէրին իթասընա Թալիպ օլան վէ չէրաիթինի անլամագ իսթէյէնլէրին մագամը Սէրասքէրի լէվազըմաթը տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 76 2—3

Պէչլինճի Օրտուի հիւմայուն մէրքէզինտէ պուլունան վէ պուլունտուրուլաճագ օլան հէր սընըֆ ասաքիրը չահանէ եէ 309 սէնէսի չէհրը խյուլունտան իթիպարէն 1 սէնէ զարֆընտա լիւզումը օլաճագ մէվզըլի միւնագասաեա գօնուլան նոխուտ իլէ սապունուն իթասընա Տէրսաատէթտէ Թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։ Նօ. 74 3—3

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Լիվէրփուլ և Միջերկրականի միջև թռիչք շոգենաւք

Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս
Քառնաք	4200	Նէֆթիս	3000
Ցէբռա	4000	Օսիրիս	3000
Օռոնթէս	4000	Նէֆթիս	3000
Սեսոստրիս	3250	Բէրօ	3000
Թիպա	3250	Լոթուս	800
Մակեդոնիա	3250	Օպելիսք	600
Մեմֆիս	3250	Ռաֆլ	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.
Ուիթթոլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
31, Ճէյմս Սդրիդ Լիվրբուլ
292

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. ԽԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԽՍԱԳՈՒԼԵԱՆ

[illegible] արհեստագործութեան մէջ Մաքրութիւն, բարեխղճութիւն, աժանութիւն

Թէյի, լօգումի, հելվայի, խավեարի, բէչէլի, խահվէի, շաքարի, սիկառի, Թուղթի և այլ բաղում պիտոյից յատուկ տուփեր նոր և գեղեցիկ ձևերով և գոյներով։

Լուսավառութեան յատուկ լապտերներ, տան վերաբերեալ ամեն տեսակ կահեր, պարտէզի դոյլեր, լուացարաններ, և լն. և լն. եւրոպական ճաշակաւ ներկուած։

Դիւրամատչելի ամենուն։

Մեծաքանակ յանձնարարութիւնք թէ՛ Պոլսէն և թէ գաւառներէն փութով և ճշդութեամբ կը կատարուին։ 719

Պահճէ-Գաբու, Րասիմ Բաշա խանի դէմ։

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Բրիտանիա, Անգլիա, Կ. Պոլիս և Օտեսա միջև

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍՕՆ ՈՐԴԻՔ

Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս
Ալբանօ	3000	Զլամինկօ	1600	Բալերմօ	3200
Անճելօ	3000	Կալիկօ	5500	Բանտոէր	1700
Ապոլլօ	3500	Կիզանօ	2200	Բլաւիօ	1500
Արկօ	3300	Իտօ	1300	Բոլօ	1000
Աբիտօ	3000	Կրոտօ	200	Քուիկօ	2800
Գասանօ	3000	Հիրօ	3000	Ռիալթօ	4400
Գորտովիա	2200	Հիտալկօ	3000	Ռինալտօ	3200
Գրանիօ	2000	Հիւմպէր	7000	Ռոլլօ	3000
Գֆֆալօ	3800	Հուպիլ	1200	Ռոմէօ	3500
Գէյրօ	2600	Ճանկօ	5000	Սօրանդօ	3500
Գալիպսօ	3500	Ժիւնօ	2300	Սալերնօ	4000
Գամէօ	2100	Քէրբօ	2000	Սանթիակօ	3200
Գոպը	2000	Քօլբինօ	4200	Սարտօ	2000
Գոմօ	2700	Քոմօ	3200	Սիլվիօ	2000
Զինձօ	5000	Լէօ	2000	Սօրէնթօ	4300
Դելօ	3300	Լեբանթօ	4500	Թ. Ալպըրթ	3000
Գօլըրատօ	3400	Լիվօրնօ	2000	Թասսօ	1200
Տիտօ	3500	Մալօ	1500	Թօլէտօ	2800
Տօմինօ	2500	Մարքօ	4300	Թորոնթօ	900
Տոնօ	4800	Մարթելլօ	6500	Ուրպինօ	5000
Տրագօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Էլտորատօ	2600	Մորէնօ	8100	Քսանթօ	3660
Էսբանիօ	3000	Նէրօ	2000	Զէնօ	1000
Իլէրտօ	3200	Օրլանտօ	3000	Ֆիֆալլիէ	200
Իտաթօ	2600	Օթէլլօ	5000	Զէնօ	200
Գալիլէօ	800	Օֆօ	4500	Զէր	140
Իտէօ	700	Օգօ	2000	Զօվմէթէ	120
Էճիբթըն Մոնարք					8000
Ասիրըն Մոնարք					8000
Լըտիըն Մոնարք					8100

Ապրանքներու համար ամեն փոխադրութեան կ'ընդունին

Դիմել առ Ֆ. ՀՈԼՑ ԵՒ ՍԻՑՕ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա
409

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ
Այս ընկերութեան շոգենաւք կը թռչին Լիվէրփուլ և Միջերկրականի միջև

Անուանք	Թօնս	Անուանք	Թօնս
Ումպրիա	7718	Գաթալոնիա	4845
Էթրուրիա	7718	Պոթնիա	4531
Սերվիա	7391	Սամարիա	3574
Աուրանիա	7268	Մարաթոն	2403
Բավոնիա	5587	Ալկէրիա	2393
Կեֆալոնիա	5517	Ցարաքոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սքիթիա	4557	Բալմիրա	2144
Ալեբբօ	2148	Թրինիտատ	899
Քէտար	1876	Մորոքքօ	1855
Շերպուրկ	1614		

Դիմել առ ԹՈՄԱՍ Ձ. ՃՈԼԻ գործակալը
Thomas C. Joly
Ալիքիրտժիս խան Թիւ 401
Ղալաթիա
17

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԲԵԱՆ

Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիա և Պոլսոյ միջև կանոնաւոր թռիչք

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաւ ուղեւորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 245 Ֆրանք
Բ. » 175 »

Թոմսակք և [illegible]

Նաւագնացք, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակալութիւն
ԹԻՄՈԹԷ ՐԸՑՈՒԼ
Մումհանէ Սիթէ Ֆրանսէ
477

ՏՐԳ. Մ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՆԳԼՕ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ
1 ՊԱՀՃԷ-ԳԱՊՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Մասնագէտք առանց քաշքշուկ լինորի արհեստական ակռաներ պատրաստելու, մէկ անգամէն ամենապատրիկ ցաւած ակռաները, ոսկի, ադամանդ և մետաղով լեցնելու, ինչպէս նաև դարմանումն ամեն տեսակ բերնի և ակռայի հիւանդութեանց։
(Բացի կիրակէ) ամեն օր առաւօտէն մինչեւ կէս օր։ 698

ԳԻՆԻ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻ

Տօքթօր Ալէրի ջերմային հիւանդութեան դէմ գիւտ՝ որ անխառն բաղադրութիւն մի է [illegible], է դառնահամ և ազդու կազդուրիչ ամէն տեսակ ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կու գան ծանծաղուտ վայրերու ջերմոտ կլիմային կամ ու տաքկանալ օդերէն, որուն օգտակարութիւնն և ազդեցիկ առոյգ յատկութիւնն երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը [illegible] ամէն։ Այս ֆիզիքական խանգարութիւնք յառաջ կու գան օդին մէջ լողացող թունաւոր անտես մարմնոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն [illegible] և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր [illegible], և արեան թունաւորումն. որոց առանձինները [illegible] ջերմ և սարսուռ, [illegible] ջերմ, [illegible] ջերմ [illegible] տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտն ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ծանծաղուտ վայրերէ մահահոտ [illegible], կամ բաց աղբանոցներէ և [illegible] ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն [illegible]։

Այս ջերմի ու տենդի [illegible] ազդեցութիւնք [illegible] մարդիկ մէջէն, որոյ գործածութիւնն [illegible] անվտանգ և [illegible] է, միայն թէ տրուած հրահանգի համեմատ գործածուի. Կը ծախուի ՄԻՆԱՍԵԱՆ և նոյն Ամերիկեան դեղատան մէջ ի Ղալաթիա, Կ. Պոլիս։ 614

COMP RUSSE DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթեւեկութիւնք

Ա. 23/4 Օտեսա ուղղակի, ժամ 9էն ետ միջօրէի։
Բ. 24/5 Աղեքսանդրիա ուղղակի, ժամ 5էն յետ միջօրէի. Պիրէէն [illegible]
Գ. 25/6 [illegible] ժամ 12ին։
Դ. 25/6 [illegible] ժամ 11ին։
Ե. 26/7 Օտեսա ուղղակի, ժամ 9էն ետ միջօրէի։

Նշ. — Յունիս 24էն երկուշաբթի օրը կ'ելնէ [illegible] 605

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷ

ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ

1893 Մայիս 30էն սկսեալ մինչև Օգոստոս 31

(Բացի կիրակի օրերէն) Եւրոպական եզերքէն կամուրջ իջնող շոգենաւուց երթեւեկութեան ժամերը

11 10 Եէնիմ. Մեզար. Պեօյ. Թարապ. Եէնիք. պօյաճ. Բ. Հիսար (Բ. Հիսարի շոգ. հետ պիտի հաղորդակցի) 37
12 — Եէնիմ. Մեզար. Պեօյիւք. Թարապիա Եէնիք. (Եէնիքէօյի շոգ. ին հետ կը հաղորդակցի) 17
12 35 Եէնիք. Ս.Թէն. Միրկ. Պօյաճք. Բ. Հիսար Պեպէք Արնվ. Գուրչ. Օրթաք. Պեշիքթաշ 42
12 40 Բ. և Ա. Գավագ Մեզարպ. Պեօյք. Թարապ. Պեյգօզ Բ. Պաշճէ Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գնտ. Օրթք (Գանտիլլիի շոգ. ին պիտի հաղորդակցի]. Ուրբ. ները ըթք. է դառ Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. Պեշիքթաշ. 38
12 45 Եէնիմ. Մեզարպ. Պեօյիւք. Թարապ. Եէնիք. (Եէնիք. ի շոգ. ին հետ կը հաղորդակցի. ուրբ. օրերը Ս.Թէն. Միրկ. պօյաճ. Բ. Հիսար պեպէք. պեպէքի շոգ. ին հետ եւս կը հաղորդակցի: 4
1 15 Եէնիք. Ս.Թէն. Միրկ. պօյաճ. Բ. Հիսար պեպ. պեպէքի շոգ. ին հետ կը հաղորդակցի բացի ուրբաթէ 20
1 40 Եէնիմահալլէէն Մեզար. պեօյիւքտ. Թարապիա Եէնիք. (Եէնիք. շոգ. ին կը հաղորդակցի]. 32
2 10 Եէնիք. Ս.Թէն. Միրկ. պօյաճք. Բ. Հիսար պեպէք Արնվ. Գուրչ. Օրթաք. պեշիքթաշ 33
2 30 Ա. Բ. Գավագ Մեզար. Պեօյք. Թարպ. Պեյգօզ Անատ. Ասիական եզերք անցնելով մինչեւ Գանտ. եղած նաւամատոյցներն հանդիպելով Օրթք. պիտի երթայ Գանտիլլիի շոգենաւուն պիտի հաղորդակցի և ուրբաթները բացի Օրթաք. Վ.անք. Չէնկ. Պեյլ. Գուզ. Պեշիկթաշ 37
3 — Եէնիմահլ. Մեսար. Պեօյք. Թարպ. Եէնիք. Ս.Թէն. Միրկ. Պօյաճ. Բ. Հիսար. Բ. Հիսարի շոգ. ին կը հաղորդակցի. ուրբ. օրերը Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պեշիք. 17
4 — Եէնիմ. Մեզարպ. Պեօյիք. Թարպ. Եէնիք. Ս.Թէն. Միրկ. Պօյճ. Բ. Հիսր. Պեպէք Պեշիկ. Պեպէքի շոգենաւուն կը հաղորդակցի, ուրբաթները Արնվ. Գուրչ. Օրթք. 40
5 30 Եէնիմ. Մեզպ. Պեօյիւք. Թարպ. Պեյգօզ Եէնիք. Ս.Թէն. Միրկ. Պօյաճք. Բ. Հիսար Պեպէք Արնվ. Գուրչ. Պեյլ. Օրթաք. Պեշիկ. 22
7 — Եէնիմ. Մեզար. Պեօյիւքտ. Թարապ. Պեյգօզ Բաշպ. Եէնիք. Միրկ. Գանլճ. Բ. Ա. Հիսար Գանտ. Արնավտ. Չէնկէլք. Պեյլէր. Օրթաք. Գուզ. Պեշիք. Իւսկ. 21
8 — Ա. և Բ. Գավագ Մեզար. Պեօյք. Թարպ. Եէնիք. Միրկ. Բ. Հիսար Պեպէք Արնավ. Գուրչ. Օրթաք. Պեշիք. ուրբաթներ Ս.Թէն. պիտի հանդիպի 32
9 40 Եէնիք. Ս.Թէն. Պօյաճ. պեպէք օրթ. [բացի ուրբաթէ 41
10 10 Բ. Հիսար Արնվք. պեշիք. 38
10 15 Եէնիմ. Մեզար. Պեօյ. Թարապ. Եէնիք. Միրկ. Բ. Հիսար Արնավ. Օրթաք. Պեշիք. 33

Եէնիքէօյէն կամուրջ իջնող շոգենաւք

11 5 Եէնիք. Ս.Թէնիա Միրկ. Պօյճ. Բ. Հիսար Պեպէք Արնավ. Գուրչ. Օրթաք. Պեշիք. 28

Պեպէքէն կամուրջ իջնող շոգենաւք

11 — Պեպէք Արնվ. Գուրչ. Օրթաք. Պեշիք. 23
11 30 Պեպէք Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պեշիք. 28
12 — Օրթաք. էն ուղղ. կամրջ. [բացի ուր է] 20
11 55 Բ. Հիսար Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պեշիկ. 41
12 35 Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պեշիք. 23
1 5 Պեպէք Արնավ. Գուրչ. Օրթ. Պեշիք. 42
1 45 Պեպէք Արնվ. Գուրչ. Օրթ. Պեշիք. 21
2 5 Օրթաք. էն ուղղ. կամրջ. բացի ուր. է 38
2 35 Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պեշիկ. 33
3 5 Պեպէք Արնվտ. Գուրչ. Օրթ. Պեշիք. 25
3 50 Բ. Հիսար Պեպէք Արնվ. Գուրչ. Օրթ. Պեշիք. Գապաթ. բացի ուրբաթէ 20
3 50 Օրթ. ուղղ. կամրջ բացի ուրբաթէ 37
4 55 Պեպէք Արնվտ. Գուրչ. Օրթ. Պեշիկ բացի ուրբաթ օրերէ 33

Ասիական եզերքէն կամուրջ իջնող շոգենաւք

11 15 Գան. Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. 33
11 15 Պեյգօզ Բաշպ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Օրթք. (Գանտ. պիտի հղրդկցի.) (Ուրբաթները բացի Օրթաք. էն Վան. Չէնկ. Պեյլ. Գուզկ.) 20
11 45 Պեպէք Գանտ. Վանիք. Չէնկել. Պեյլեր. Գուզ. Պեշիք. [բացի ուրբաթէ] 21
12 — Պեյգօզ Բաշպ. Եէնիք. Զպւլ. Գանլճ. Պօյճ. Բ. Ա. Հիսար Գանտ. Արնվ. Չէնկ. Պեյլ. Օրթ. Գուզ. Իւսկ. Պեշիք. Գապ. 25
1 — Գանտիլ. Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. Պեշիք. 28
1 15 Պեյգօզ Բաշպ. Զուպ. Գանլճ. Ա. Հիսար Գանտիլ. Օրթաք. [Գանտիլլիի շոգ. ին կը հաղորդակցի]. ուրբաթները բացի Օրթ. է Վանիք. Չէնկել. Պեյլ. Գուզկ. Պեշիք. 38
1 50 Պեյգ. Եէնիք. Ս.Թէն, Միրկ, պօյաճ, Բ. Հիսար պեպէք արնվ, գուրչ. Օրթ. պեշիքթաշ, Եէնիք. էն կամուրջ գացող շոգ. ին հետ կը հաղորդակցի: 33
2 — Գանտլ. Վանիք. Չէնկլք. Պեյլէրպէյ Գուզկ. Պեշիկ. բացի ուրբաթէ 41
3 — Գանտլ. Վանիք. Չէնկլ. Պեյլէրպէյ Գուզգ. Պեշիկթ. 28
3 10 Պեյգօզ Բաշպհ. Զուպ. Գանլճա Ա. Հիսար Գան. Օրթ. (Գանտիլլիի շոգենաւուն կը հաղորդակցի. ուրբաթները Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. Պեշիք. պիտի հանդիպի) 1
3 45 Գանտ. Վան. Չէնկ. Պեյլ. Գզկ. Իւսկ. [բացի ուրբաթէ] 38
4 20 Պեյգօզ. Բաշպ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Պեշիք. [Գանտ. շոգ. ին կը հաղորդակցի ուրբաթները 4 45ին Մեզար. պեօյիւք, Թարապ Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. 23
5 — Գանտ. Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. Պեշիկ. բացի ուրբաթէ 41
7 — Միրկ. Բ. Ա. Հիսար Գանտ. Արնվ. Չէնկ. Պեյլ. Օրթք. Գուզկ. Պեշիք. Իւսկ. հինգշ. օրերը Օրթ. և Պեշ. չհանդիպիր] 25
9 — Պեօյ. Թարպ. Պեյգ. Բաշպ. Զուպ. Գանլճ. Ա. Հիսար Գանտիլ. Վանիք. Չէնկ. Պեյլ. Գուզկ. Իւսկ. 28
9 35 Գանտիլլի Չէնկելք. Պեյլեր. բաց ի ուրբաթէ 42
10 10 Պեյգօզ. Գանլ. Ա. Հիսար Չէնկլ. Պեյլ. Պեշիք. [բացի ուր. է 22
10 20 Ա. Հիսարէն ուղղ. կամուրջ. 20
11 — Գզկնճք. էն ուղ. կամրջ. (բացի ուր.) 41
11 — Վանիք. էն ուղղակի կամուրջ բաց ի ուրբաթ օրերէ 21
11 55 Գուզկ. Իւսկ. բացի ուր. է 11

(Բացի կիրակի օրերէն) կամուրջէն Եւրոպական եզերք երթեւեկող շոգենաւուց ժամերը

12 25 կամուրջէն ուղղակի Եէնիք. բաց ի ուրբաթէ 20
12 35 Պեշիք. Օրթ. Գուրչ. Արնվ. պեպէք Բ. Հիսար Միրկ, Ս.Թէն, Եէնիք, Թարապ. պեօյիւք, Մեզար. Եէնիմ, Բ. Ա. Գավագ 37
1 15 Պեշիք. Օրթք. Գուրչ, Արնվ. Պեպէք Բ. Հիսար պօյաճ, Եէնիք. Թարպ. Պեյք. Մեզար. Եէնիմ. 17
2 — Գապաթ. Պեշիք. Իւսկ. Գուզկ. Օրթաք. Պեյլ. Չէնկլ. Արնվ. Գանտլ. Ա. և Բ. Հիսար Գանլճ. Միրկ. Եէնիք. Բշպհ. Պեյգ. Թարպ. Պեօյ. Մեզրպ. Եէնիմ. 22
2 30 Պեշիք. Օրթաք. Արնվտք. Բ. Հիսար Միրկ. Եէնիք. Թրպ. Պեօյք. Մեզար. Եէնիմհ. 40
3 10 Պեշիկ. Օրթք. Արնավ. Գանտ. բաց ի ուրբաթ օրերէ 38
4 — Պեշիք. Օրթ. Գուրչ. Արնվ. Պեպէք Բ. Հիսար. Պօյաճք. Ս.Թէն. Եէնիք. Թարպ. Պեյիւքտ. Մեզարպ. Եէնիմահ. 21
4 15 Պեշիկ. Օրթ. Արնավ. Գանտ, բաց ի ուրբաթէ 41
5 — Իւսկ. Պեշիք. Գուզկ. Օրթաք. Պեյլ. Չէնկ. Արնվ. Պեպէք Գանտ. Ա. և Բ. Հիսար Գանլ. Զպուպ, Միրկ. 25
6 — Գապաթ. Պեշիք. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պեպէք. Բ. Հիսար Միրկ. Եէնիք. Պեյգօզ. Թարապ. Պեօյիւքտ. Մեզարպ. Եէնիմ. Գավագներ 32
7 — Պեշիք. Իւսկ. Գուզկ. Պեյլ. Չէնկ. Արնվ. Գանտ. Բ. Հիսար Պօյճ. Գանլ. Եէնիք. Թարպ. Պեօյք. 23
8 30 Պեշիք. Օրթ. Արնավ. Պեպ. Բ. Հիսար Միրկ. Եէնիք. [Եէնիք. էն Եէնիմ. գացող շոգ. ին հետ կը հաղորդակցի. ուրբաթները Թարպ. Պեօյ. Մեզար. Եէնիմահալլէ 41
9 — Միրկ. Եէնիք. Թարապ, պեօյիւք, Մեզար, Եէնիմ. բացի ուրբաթէ 33
9 25 Պեշիք. Օրթաք. Գուրչ. Արնվ. Պեպէք Բ. Հիսար 38
10 — Եէնիք. Թարպ. Պեօյ Մեզար. Եէնիմ. ուրբաթները 9 40 անցած 40
10 5 Պեշիք. Օրթաք Գուրչ Արնավ. Պեպէք Բ. Հիսար պօյաճ. Միրկ. Ս.Թէն. Եէնիք. Թարապ. Պեօյք. Մեզարպ. Եէնիմ. (ուրբ. ները 10 վայրկեան առաջ 17
10 45 Բ. Հիսար Պօյաճ. Միրկ. Ս.Թէն. Եէնիք. Թարպ. Պեօյիւքտէրէ Մեզար. Եէնիմ. (ուրբաթները չկայ) 32
11 20 Եէնիք. Թարպ. Պեօյ Մեզպ. Եէնիմ. 33
11 35 Պեպէք Բ. Հիսար Պօյաճ. Միրկ. Ս.Թէն. Եէնիք. 42

Կամուրջէն Արնաւուտքէօյ երթեւեկող շոգենաւուց ժամերը

11 50 Ուղղ. պեպէք 22
2 35 Ուղղ. Պեպէք 25
10 35 Պեշիք. Օրթ. Գուրուչ. Արնավ. Պեպէք Գանտ. Ա. և Բ. Հիսար Գանլճ. Միրկ. Եէնիք. Բ. Պաշճ. Պեյք. բացի ուր. է 25
11 15 Գապ. Պեշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պեպէք Բ. Հիսար. Պօյաճք. Եէնիք. 28
11 45 Պեշիք. Օրթ. Գուրուչ. Արնվ. Պեպէք 22
12 15 Պեշիք. Օրթ. Գուր. Արնվտ 33

Կամուրջէն Ասիական եզերք երթեւեկող շոգենաւուց ժամերը

12 15 Գուզ. Պեյլ. Չէնկ. Ա. Հիսար Գանլ, Զպուպ, Բաշպ. Պեյգ, Եէնիք, (Եէնիք. էն կամուրջ գացող շոգ. ին հետ կը հաղորդակցի 33
12 25 Ուղղակի Գանտիլ, ուրբաթները պեշիք. պիտի հանդիպի: 28
1 — Իւսկ. Չէնկ. Պեպէք 21
1 20 Ուղղակի Գանտլ. բացի ուրբաթէ 41
2 10 Պեյլէ, Չէնկլ, Գանտիլ, 28
2 45 Իւսկ. Գուզ. Պեյլ. Չէնկէլք. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլճ. Զպուբէլ Բ. Պաշճէ, Պեյգօզ ուրբաթները Թարապ, պեօյիւք, Մեզար. 42
3 — Պեյլ. Չէնկ. Բ. Հիսար բացի ուրբ. է 20
3 50 Իւսկ. Պեյլ. Չէնկ. Պեպէք բաց ի ուրբաթ օրերէ 33
8 40 Պեշիք. Գուզկ. Պեյլ. Չէնկ. Գանտլ. (Գանտիլլիէն Պեյգօզ գացող շոգ. ին հետ կը հաղորդակցի] ուրբաթ օրերը Ա. Հիսար Գանլճ. Զպուպ. Բ. պաշճէ Պեյգօզ Թարապ, պեյիք, Մեզար, 42
9 5 Գանտլ. Ա. Հիսար գանլճ, Զպուպ, Բաշպ., պեյգօզ բացի ուրբաթէ 22
9 30 Պեշիք. Գուզկ. Պեյլպ. Չէնկլ. Վանիք. Գանտլ. Ա. Հիսար 20
10 20 Պեշիք. Գանտ. Ա. Հիսար Գանլճ. Զպուպ. Բաշպ. Պեյգօզ Թարապիա Մեզարպ. Բ. Ա. Գավագներ. 37
10 30 Պեշիք. Պեյլպ. Չէնկ. Վ.անք, ուր. օրերը Իւսկ. Գուզկ. Արվ. Գանտլ. Բ. և Ա. Հիսար Միրկ. Եէնիք. Պեօյիւք. 21
10 40 Իւսկ. Գուզ. (Բացի ուրբաթէ) 42
11 — Պեշիք. Գուզկ. Պեյլպ. Չէնկելքէօյ Վան. Գանտ. Ա. Հիսար Պեպէք Ուրբ. օրերը Իւսկ. 41
11 22 Գանտիլ. Ա. Հիսար Գանլճ. Զպուպ. Բաշպ. Պեյգօզ (ուրբթ. Գուզկ.) 20
11 30 Իւսկ. Գուզ. 11
11 45 Գապ. Գուզ. Պեյլ Չէն Վ.անք Գանտ. 21

Ամէն ուրբ. ժ. 3 45ին կամուրջէն շոգենաւ մը ելնելով Իւսկ. Գուզկ. պեյլ. Չէնկլ. Վանիք. Գանտլ. Ա. Հիսար Գանլճ. Զպուպ. Բաշպ. Պեյգ. Թարապիա Պեօյիւք, Մեզար. պիտի հանդիպի։

Ամէն ուրբ. ժ. 4 20ին շոգ. մը կամուրջէն պեշիք. Օրթ. Պեյլ. Չէնկլ. և պեպէք պիտի երթայ.

Ամէն ուրբ. ժ. 5 15ին Պեպէքէն շոգենաւ մը ելնելով Արնվ. Չէնկլ. Պեյլ. ըթք. գուզկ. Պեշիք. և անտի կամուրջ պիտի գայ

Ամէն ուրբ. ժ. 5 45ին շոգ. մը Մեզար. էն ելնելով Պեօյիւք. Թարապ, պեյգ. Բաշպ. Զպուպ. գանլճա Ա. Հիսար գանտլ. Վանիք. Չէնկլ. պեյլ. Գուզկ. Իւսկ. և անտի կամուրջ պիտի գայ։

Ամէն ուրբ. երեկոյ 10 40ին Մեզար. էն շոգ. մը ելնելով պեօյիւք, Թարապ, պեյգ, Բաշպ, Զպուպ, գանլճ. Ա. Հիսար գանտլ. Չէնկ, պեյլ, Իւսկ, և անտի կամուրջ պիտի հանդիպի։

Ամէն ուրբ. երեկոյ ժամ 11ին Մեզար. էն շոգ. մը ելնելով պեօյիւք. Թարապիա պեյգօզ Եէնիք. Միրկ, Բ. Հիսար պեպէք Արնվտ. Օրթաք. պեշիք. և անտի կամուրջ պիտի հանդիպի։

ԽԱՍԳԻՒՂԻ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՔ

Խասգիւղէն	Կամուրջ	Կամուրջէն	Խասգիւղ
— —		11 20	
11 —		11 50	
11 30		12 15	
12 —		12 45	7 10
12 30	7	1 20	8 15
1 —	8 10	1 40	9 5
1 30	8 20 Վ.ափ.	2 15	9 50
2 —	8 50	2 50	10 15
2 45	9 30	2 45 Վ.ափ.	10 30 Ֆերպ.
3 40	10 — Ֆերպ.	3 20	10 40 Գզկ.
3 15 Ֆերպ.	10 25	4 45	11 —
4 20 Վ.ափ.	10 45	4 — Ֆերպօթ	11 30 Ֆերպ.
4 50	11 — Գուզկ.	5 — Վ.ափ.	11 30 Գզկ.*
5 30	11 — Ֆերպ.	5 40	11 50
4 45 Ֆերպ.	11 20	6 35 Ֆերպ.	— —
6 15	12 5	6 25	12 10

ԿԻՐԱԿԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐ

Խասգիւղէն	Կամուրջ	Կամուրջէն	Խասգիւղ
11 —	—	11 20	
11 45	7 —	11 50	6 25
12 30	8 —	12 15	7 10
1 15	8 20 Վ.ափ.	1 —	8 20
2 —	9 —	1 45	9 5
3 40	9 30	2 15	9 45
3 20	10 — Ֆերպ.	3 5	10 15
4 15 Ֆերպօթ	10 15	2 45 Վ.ափ.	10 30 Ֆերպ.
4 —	10 40	4 — Ֆերպօթ	10 40
4 35	11 Ֆերպ.	4 30	11 30 Ֆերպ.
4 45 Ֆերպօթ	11 10	5 — Վ.ափ.	11 20
5 15	11 45	5 30	11 50
6 —	12 5	5 35 Ֆերպ.	12 10

* Այս երթեւեկութիւն ուրբաթ [illegible] և Տօն օրերը տեղի չունի [illegible]

ՀԱՐԷՄ ԻՍԿԷԼԷՍԻ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՔ

1 30 Հարէմէն Սալաճագ (բացի կիրակիէ)
3 40 » » (բացի ուր է]
10 40 » » (բացի ուր. և կիր. օրերէ)
11 25 » » (ուր. և կիր. ժ. 10 45ին)

1 15 կամուրջէն Հարէմ Սալաճագ բացի կիրակիէ
3 10 կամուրջէն Հարէմ Սալաճագ բացի ուրբաթ
10 10 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ (Բացի ուրբաթ և կիրակի օրերէ]
11 10 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ (Կիրակի և ուրբաթ օրերը ժ. 10 30ին).

ԽԱՍԳԻՒՂ ՍԻՐՔԷՃԻ ԻՍԿԷԼԷՍԻ

ԵՒ

ՔԱՍԸՄՓԱՇԱ ՄԻՋԵՒ ՆԱՒԱՐԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՈՒՆ ԵՐԹԵՒԵԼԻ ԺԱՄԵՐԸ

3 15 Խասգիւղէն Գասըմփաշա Սիրքէճի
4 45 Խասգիւղէն Սիրքէճի
10 — Խասգիւղէն Սիրքէճի
11 — Խասգիւղէն Սիրքէճի
4 — Սիրքէճիէն Խասգիւղ
5 35 Սիրքէճիէն Գասըմփաշա Խասգիւղ
10 30 Սիրքէճիէն Խասգիւղ
11 30 Սիրքէճիէն Գասըմփաշա Խասգիւղ

Նշ. — Օդը միգամած եղած ատեն, շոգենաւը [illegible]